Որ և սուրբ լեառըն Սիոնին,
Ամրոց մեծի Թագաւորին,
Աստուածահօր մարգարէին.
Թէպէտ և էր ժամն առաջին,
Որ յիս որդիքն իմ պարէին. 910
Ակումբ առեալ սաղմոսէին,
Զերեքսրբեանն կարդային.
Խնճոյս փառաց յիս առնէին,
Ըզմայրս ի տեսըն կոչէին,
Եւ շուրջ զինև համբառնային.
Այսրէն և անդր իմ շրջէին,
Ի յիմ ծոցս ժողովէին,
Եւ ի հեռաւոր երկրէ գային։
Եւ որք առ իսըն մտանէին, 931
Ի հեշտս իւ գոյն ննջէին,
Ի յիմ երկու ստեանց ըմպէին
Կաթն և գինի զոր բղխէին։
Եւ թէ և այլս մզէին,
Ի յիւղ և մեղր թրմէին.
Եւ որքան զինըն ճմլէին,
Անոյշ հոտով հեշտանային։
Ի տես փառաց իմ միտէին,
Հարաւային դշխոյք գային, 940

806. Նոյել, et au génitif Նոյելի, transcription de notre mot français *Noël*.

801 J'invoque le Jourdain,
Qui entendit jadis la voix du Père;
Où l'Esprit-Saint, sous forme d'une colombe,
Révéla la gloire [du Fils] qui lui est consubstantiel.
Où sont maintenant tes troupes, qui ne se montrent plus,
Le jour de la grande et sainte fête de Noël?
Hélas! il a cessé cet imposant
Concours de peuple!
Je vais sur la montagne où triomphèrent
810 Les vainqueurs de mon âme affligée,
Où habitaient des moines,
Occupés à la prière et aux macérations,
Des troupes de vierges brûlant [de l'amour divin]
Devant les lampes qu'elles entretenaient allumées.
Hélas! à leur place rampent
Les serpents et les scorpions de l'Égypte;
821 J'invoque le lac de Tibériade,
Dont la contrée fut saccagée la première;
Où fut la résidence du Christ
Et de ses onze disciples.
Pourquoi restes-tu ainsi muet?
Tes ondes n'ont-elles pas été teintes de sang?
905 Voici ce que dit l'Église mère,

Qui est la montagne de Sion,
La forteresse du grand roi,
Du prophète [David], père de Dieu :
— Il fut un temps, jadis,
Où mes fils formaient chez moi des chœurs de danse; 910
Ils se réunissaient pour chanter des cantiques,
Et faire retentir le trisagion;
Ils célébraient des fêtes pompeuses,
Invitant les cèdres à contempler ce spectacle.
Autour de moi se déployait leur grandeur;
Ils allaient et venaient
Et se groupaient dans mon sein.
En arrivant des pays lointains.
Ceux qui entraient chez moi 931
S'endormaient dans l'abondance des biens que je leur prodiguais;
A mes mamelles ils suçaient
Le lait et le vin qui s'en épanchaient;
En exprimant ce qu'elles contenaient encore.
Ils se gorgeaient d'huile et de miel.
S'ils me pressaient,
Je rendais une odeur dont ils étaient embaumés.
Avides de contempler ma gloire,
Les reines du Midi accouraient, 940

Եւ թագաւորքն Սաբային·
Նոյն և իշխանքն Արաբացին
Ընծայաբերք ինձ լինէին
Ի պատուական ոսկւոյ նոցին·
Քար լուսատու և մեծագին
Ի գրապանակս իմ դնէին,
Եւ զիս պըճնեալ զարդարէին,
Որպէս ըզհարսըն փեսային ։
Եդեալ հիմունս իմ ճարտարին
Ըզկարկեհանն ընդ զըմրուխտին,
Զտոպազիոնն ընդ յասպիսին,
Յեռեալ ընդ կայծըն մեծագին,
Ըզշափիւղայն զարմանալին,
Եւ զգահանակն ընդ սուսակին ։
Եւ զպսակայոյց իմ պըսակին,
Ոք մի չըտայ գնըշան նորին,
Զի չկայ նըման օրինակին,
Բայց թէ նըշանըն տէրունին,
Կամ ծիածանն որ ի յերկին,
Ի գարնային եղանակին·
Յորժամ էի իմ փեսային
Դշխոյ կացեալ յաջոյ թեւին·
Յորժամ թագիւ ոսկեղինին
Զիս պաճուճեալ պըսակէին ։
Էր յիս Հոգի քահանային,
Որ միշտ ի սիրտըս խօսէին·
Եւ սարկաւագք սըրբոյ ատենին,
Որ մեծաձայն բարբառէին,
Եւ օտարաց քարոզէին,
Գալ ի սեղան իմ առէին ։
Այժմ արեւուն լոյսն ինձ մըթին,
Յորժամ տեսի զորս ըսպանին·
Զորդիսն ի գիրկս իմ կորուսին,
Եւ զիս արեամբ թաթաւեցին,
Եւ թագ ընկէց զիս ասրայլին,
Ըզհարսնութեան քողըն բարձին·
Ըզպատմուճանն իմ հրաշալին
Յինէն ի բաց մերկացուցին ։
Զի առակեալ կողոպտեցին,
Ի հանդերձիցըն զրկեցին,
Եւ դան հարեալ ապտակեցին,
Վէրս ի վերայ եդեալ վիրին ։
Վասն որոյ լամ զանլըռելին,
Բախեմ ըզկուրծս ի ցաւս անձին·
Զի զխառնարան սուրբ բաժակին
Զայն լըրբաբար խորտակեցին,
Եւ ըզնըշան սըրբոյ խաչին
Յառաջագոյն յինէն հանին·

Ainsi que les souverains du pays de Saba,
Et les princes de l'Arabie
Venaient m'offrir
Leur or précieux;
De pierres brillantes et d'un grand prix
Ils remplissaient mon trésor.
Ils se plaisaient à me parer,
Comme une fiancée.
L'architecte m'avait donné pour base
L'escarboucle et l'émeraude,
La topaze et le jaspe,
Mêlés à l'améthyste précieuse,
Le saphir admirable,
La sardoine et le bdellium.
Quant à ma couronne,
Personne n'en pourrait donner l'idée;
Car rien ne lui est comparable,
Si ce n'est la Croix du Seigneur,
Ou l'arc-en-ciel qui apparait
Dans la saison du printemps.
J'étais alors la fiancée du jeune époux,
Une reine, siégeant à sa droite;
Une couronne d'or
Ceignait mon front avec éclat.
Chez moi vivait l'esprit sacerdotal
Qui converse sans cesse dans la profondeur des cœurs;
Et les diacres de la sainte Église,
Qui, s'énonçant à haute voix,
Invitaient les étrangers à accourir
Et à s'approcher de ma table.
A présent la lumière du soleil s'est obscurcie pour moi,
Lorsque j'ai vu ceux à qui on a ôté la vie,
Mes fils égorgés entre mes bras,
Et m'inondant de leur sang,
Et moi-même, dépouillée de ma couronne,
De mon voile de mariée
Et du magnifique manteau
Que l'on m'a enlevé,
Livrée à l'opprobre, à la spoliation,
Mise à nu,
Accablée de coups et de mauvais traitements,
Criblée de blessures sur blessures.
Aussi rien ne peut arrêter mes larmes;
Dans ma douleur, je meurtris ma poitrine;
Car le saint calice
Ils l'ont brisé en éclats avec irrévérence,
Et le signe de la sainte Croix
Ils me l'ont d'abord enlevé.

Եւ ըզբուրվառս համակ ոսկին
Հանդերձ խնկովքըն փշրեցին·
Ըզչորեսին խունկսն իմ առին,
Եւ ըզնոցին պաշտն ընկեցին։
Եւ վասն ականց պատուականին
Զիս ի հիմանց տապալեցին·
Ըզլուսատու կանթեղսն առին,
Եւ ի ջահիցըն զըրկեցին·
Ըզպաշտաման ձայն արգելին,
1020 Եւ ըզսեղանս անարգեցին
Ըզժամահար փայտն այրեցին,
Եւ զթակաղաղըն կորուսին·
Միայն թողեալ զիս փեսայն,
Զի ատեցեալ եղէ նորին։
1053 Հէմ, դու, լուր, երկիր վերին,
Արեւելեան տոհմ Յաբեթին,
Ուստի ծագէ լոյսն արեւին,
Ուր և դրախտն է Եդենին·
Առ ցես ընդ քեզ և ըզՍեմին,
Նալ և զՔամայն մի մոռասցին,
Որք յընդհանուր կողմանց քառին,
Ցնակեալ գոլով ի մէջ ազգին· 1060
Արեւելեանքըն զարեւմըտին,
Նա և հիւսիս ընդ հարաւին,
Միահաղոյն ընդ միականին,
Տեսող լերուք խոցոյ ցաւին,
Ալեւորք իցեմ ես բազմազին,
Ամաց յոլով եմ ծեր և հին·
Եմ և հրմուտ զանազանին
Չարեաց բազմաց որ ինձ հասին,
Մինչ կարծէի թէ ի յետին
Ժամանակիս կատարածին։ 1070

Եւ ոչ պատիւ, Երուսաղէմ, 1137
Ըստ պատշաճի, Երուսաղէմ·
Ոչ ունիս քող, Երուսաղէմ,
Եւ ոչ հանդերձ, Երուսաղէմ, 1140
Ոչ զարդարանք, Երուսաղէմ,
Շքեղազարդ, Երուսաղէմ։
Պոռնիկ եղեր, Երուսաղէմ,
Եւ խայտառակ, Երուսաղէմ·
Արեամբ լըցեալ, Երուսաղէմ,

Les encensoirs en or
Ont été mis en pièces avec l'encens;
Mes quatre sortes d'encens m'ont été ravis,
Et le bassin qui les contenait, jeté au loin.
Pour avoir mes pierres précieuses,
Ils m'ont renversée jusqu'aux fondements.
Ils se sont emparés de mes lampes lumineuses
Et de mes flambeaux.
Les chants sacrés ont été empêchés,
1020 Les autels profanés,
Les jamahar en bois[1] brûlés,
Les chapiteaux de colonnes détruits.
Mon époux m'a abandonnée
Dans l'aversion qu'il a conçue contre moi.
1053 Ô terre d'en haut, écoute ma voix;
Race orientale, issue de Japhet[2],
D'où vient la lumière du soleil,
Et où est situé le paradis d'Éden,
Prends avec toi les enfants de Sem,
Sans oublier les descendants de Cham,
Occupant le monde entier,
Et répandus en tous lieux, 1060
A l'orient et à l'occident,
Au nord et au midi.
Tous ensemble
Venez contempler ma douleur.
Vénérable par ma vieillesse
Et chargée d'années,
J'ai fait la dure expérience des différents
Maux qui ont fondu sur moi,
Au point que je pensais que la fin
Des temps était arrivée. 1070

Tes honneurs, ô Jérusalem, 1137
Ne sont plus ceux qui te sont dus, ô Jérusalem;
Tu n'as plus de voile, ô Jérusalem,
Ni de vêtements, ô Jérusalem, 1140
Ni d'ornements, ô Jérusalem,
Magnifiques, ô Jérusalem.
Tu es devenue adultère, ô Jérusalem,
Et un objet d'opprobre, ô Jérusalem,
Tu as été inondée de sang, ô Jérusalem,

[1] Le jamahar, ժամահար, est une sorte de crécelle ou instrument de bois qui, par le bruit qu'il produit lorsqu'il est frappé avec un maillet, sert, en Orient, à appeler les fidèles à la prière. Le jamahar a aujourd'hui dans quelques localités, comme en Cilicie, la forme d'un cadre à lames en bois, suspendu par une corde à la porte des églises. Lorsqu'on le frappe, il rend des sons gradués, suivant la grosseur des lames. A Constantinople, on emploie une barre de fer, qu'un homme, parcourant les rues, fait résonner en la heurtant contre terre, et en criant : ժամ հրամմեցէք, venez à l'office.

[2] La *Nation Orientale*, c'est-à-dire la Grande-Arménie. (Cf. ci-dessus Matthieu d'Édesse, page 9, note 1.)

Որպէս ըզծով, Երուսաղէմ։
Ձագք աղաւնեաց, Երուսաղէմ,
Ի քեզ ներկեալ, Երուսաղէմ,
Անցեալ ընդ սուր, Երուսաղէմ,
Արեամբ թացեալ, Երուսաղէմ·
Եւ յապաժոյժն, Երուսաղէմ,
Թաթաւեցան, Երուսաղէմ·
Ընկղմեցան, Երուսաղէմ,
Ի յապաւառն, Երուսաղէմ։
Ձայն տատրակի, Երուսաղէմ,
Ի քեզ հնչէր, Երուսաղէմ։
Թէ զինչ եղեր, Երուսաղէմ,
Քո դըստերօքն, Երուսաղէմ։
Ո՞ւր է տաճարն, Երուսաղէմ,
Անվայելուչն, Երուսաղէմ,
Գեղեցկաշէնն, Երուսաղէմ,
Այն աննըմանն, Երուսաղէմ·
Եւ կամ զի՞արդ, Երուսաղէմ,
Այն սուրբ Սիոն, Երուսաղէմ,
Ուստի բըղխեաց, Երուսաղէմ
Կենաց վտակն, Երուսաղէմ·
Ո՜հ թէ բարձար, Երուսաղէմ,
Այլ ոչ յիշիս, Երուսաղէմ·
Կամ գերեզմանք, Երուսաղէմ,
Յուսոյն բարեաց, Երուսաղէմ,
Տապալեցաւ, Երուսաղէմ,
Աղաւաղեալ, Երուսաղէմ·
Կամ մոռացար, Երուսաղէմ,
Տարագրեցար, Երուսաղէմ·
Այրի եղեր, Երուսաղէմ,
Ի սուգ նըստար, Երուսաղէմ։
Ո՞ւր խնդրեցից, Երուսաղէմ,
Կամ ո՞ւր գտից, Երուսաղէմ։
Դու աշտանակ, Երուսաղէմ,
Եօթնաջահեան, Երուսաղէմ։
Ոչ կարասցես, Երուսաղէմ,
Թաքչել յանկիւն, Երուսաղէմ,
Եւ ոչ ծածկիս, Երուսաղէմ,
Դու, ընդ մահճօք, Երուսաղէմ։
Մի՞ թէ իցես, Երուսաղէմ,
Այդ թաքուցեալ, Երուսաղէմ,
Ընդ հովանեաւ, Երուսաղէմ,
Վիմին սըրբոյ, Երուսաղէմ·
Կամ թէ տեսեալ, Երուսաղէմ,
Որք յօտարաց, Երուսաղէմ,
Յօրիորդաց, Երուսաղէմ,
Ի հարսնեկաց, Երուսաղէմ։
Դու իւղ թափեալ, Երուսաղէմ,

Comme d'une mer, ô Jérusalem;
Les petits des colombes, ô Jérusalem,
En ont été couverts dans ton sein, ô Jérusalem,
Passés au fil de l'épée, ô Jérusalem,
Baignés de sang, ô Jérusalem,
Dont les flots, ô Jérusalem,
Les ont inondés, ô Jérusalem;
Ils ont été engloutis, ô Jérusalem,
Dans ces souillures, ô Jérusalem.
La voix de la tourterelle, ô Jérusalem,
Retentissait dans ton enceinte, ô Jérusalem.
Qu'es-tu devenue, ô Jérusalem,
Avec tes filles, ô Jérusalem?
Où est ton Temple, ô Jérusalem,
Maintenant sans splendeur, ô Jérusalem?
Ce temple à la magnifique architecture, ô Jérusalem,
Sans pareil, ô Jérusalem?
Dans quel état est aujourd'hui, ô Jérusalem,
Cette sainte Sion, ô Jérusalem,
D'où s'écoula, ô Jérusalem,
Le fleuve de vie, ô Jérusalem?
Tu n'es plus, ô Jérusalem;
Et ton souvenir s'effacera, ô Jérusalem.
Le tombeau, ô Jérusalem,
De celui en qui est l'espérance du bonheur, ô Jérusalem,
A été ébranlé, ô Jérusalem,
Et ruiné, ô Jérusalem.
Tu as été oubliée, ô Jérusalem,
Dans ton exil, ô Jérusalem;
Tu es devenue une veuve, ô Jérusalem,
Plongée dans le deuil, ô Jérusalem.
Où te chercher, ô Jérusalem,
Et où te trouver, ô Jérusalem,
Toi le chandelier, ô Jérusalem,
A sept branches, ô Jérusalem?
Tu ne pourras, ô Jérusalem,
Te cacher dans un coin, ô Jérusalem,
Ni te dérober, ô Jérusalem,
Sous la litière, ô Jérusalem,
Quand même tu serais, ô Jérusalem,
Alors cachée, ô Jérusalem,
Sous la protection, ô Jérusalem,
De la sainte pierre, ô Jérusalem;
Mais tu verras venir pour te voir, ô Jérusalem,
De l'étranger, ô Jérusalem,
Des jeunes filles, ô Jérusalem,
Cortége de la mariée, ô Jérusalem.
Tu es le parfum répandu, ô Jérusalem,

Հոտու հաճոյ, Երուսաղէմ,
Քրքում և զմուռ, Երուսաղէմ,
Եղնաբուրէ եղէգն, Երուսաղէմ,
Կոս կինամոն, Երուսաղէմ,
Ծրար ստաշխից, Երուսաղէմ.
Բուրվառ ոսկի, Երուսաղէմ,
Քառից խնկոց, Երուսաղէմ.
Սափոր լցեալ, Երուսաղէմ,
Հացին երկնից, Երուսաղէմ.
Նման վարդի, Երուսաղէմ,
Եւ շուշանի, Երուսաղէմ։
Ի հետոս քո, Երուսաղէմ;
Գամ սրտաթափ, Երուսաղէմ;
Ըղձամ տարփմամբ, Երուսաղէմ.
Մի՞թէ հասցէ, Երուսաղէմ,
Առ դրունս քո, Երուսաղէմ,
Գնացք ոտիցս, Երուսաղէմ։
Լուսաւորեալ Երուսաղէմ,
Զի լոյս քո եկն, Երուսաղէմ.
Եւ զի խաւար, Երուսաղէմ,
Ծածկեաց զերկիր, Երուսաղէմ,
Եւ մառախուղ, Երուսաղէմ,
Ըզհեթանոս, Երուսաղէմ։
Բայց ի քեզ Տէր, Երուսաղէմ,
Յայտնի փառօք, Երուսաղէմ.
Եւ դու համբարձ, Երուսաղէմ,
Զաչս ի յերկինս, Երուսաղէմ.
Տես ժողովեալ, Երուսաղէմ,
Ըզքո մանկունս, Երուսաղէմ,
Զորդիսըն քո, Երուսաղէմ,
Քո դստերք, Երուսաղէմ.
Զի գալով գան, Երուսաղէմ,
Ի լոյսըն քո, Երուսաղէմ։
Քեզ թագաւորք, Երուսաղէմ,
Եւ զօրավարք, Երուսաղէմ,
Նա և գնասցեն, Երուսաղէմ,
Ծագմամբ լուսոյ, Երուսաղէմ։
Բայց ժողովուրդք, Երուսաղէմ,
Հեթանոսաց, Երուսաղէմ,
Յայտնեալ տեսցեն, Երուսաղէմ,
Եւ ցնծասցեն, Երուսաղէմ,
Եւ մոռասցիս, Երուսաղէմ,
Սուգ զայրութեան, Երուսաղէմ.
Զի փոխեսցի, Երուսաղէմ,
Առ քեզ փոխիւ, Երուսաղէմ;
Գաւառ ծովու, Երուսաղէմ,
Եւ ցամաքի, Երուսաղէմ,
Եւ մեծութիւն, Երուսաղէմ,

A l'odeur suave, ô Jérusalem;
Le safran et la myrrhe, ô Jérusalem,
La canne odorante, ô Jérusalem,
Le cinnamome, ô Jérusalem,
Une masse de myrrhe, ô Jérusalem,
L'encensoir d'or, ô Jérusalem,
Qui reçoit les quatre encens, ô Jérusalem,
L'urne remplie, ô Jérusalem,
Du pain céleste, ô Jérusalem.
Tu es semblable à la rose, ô Jérusalem,
Et au lis, ô Jérusalem;
Sur tes traces, ô Jérusalem,
Je cours, le cœur éperdu d'amour, ô Jérusalem,
Brûlant de désirs, ô Jérusalem;
Me conduiront-ils, ô Jérusalem,
Jusqu'à tes portes, ô Jérusalem,
Mes pas, ô Jérusalem?
Tu es devenue resplendissante, ô Jérusalem,
Car ta clarté a brillé, ô Jérusalem,
Tandis que les ténèbres, ô Jérusalem,
Ont couvert la terre, ô Jérusalem,
Et que le brouillard, ô Jérusalem,
A enveloppé les païens, ô Jérusalem;
Mais chez toi le Seigneur, ô Jérusalem,
Se manifeste dans sa gloire, ô Jérusalem.
Lève, ô Jérusalem,
Tes yeux vers le ciel, ô Jérusalem;
Vois rassemblés, ô Jérusalem,
Tes jeunes gens, ô Jérusalem
Tes fils, ô Jérusalem,
Et tes filles, ô Jérusalem;
Ils accourent, ô Jérusalem,
Vers ta lumière, ô Jérusalem.
A toi les rois, ô Jérusalem,
Et les chefs d'armée, ô Jérusalem,
Viendront aussi, ô Jérusalem;
A l'éclat de tes clartés, ô Jérusalem,
La foule, ô Jérusalem,
Des païens, ô Jérusalem,
Apparaîtra, ô Jérusalem,
Pour t'être un sujet de joie, ô Jérusalem.
Tu oublieras, ô Jérusalem,
Le deuil de ton veuvage, ô Jérusalem;
Car tu obtiendras, ô Jérusalem,
Dans une large compensation, ô Jérusalem,
L'empire de la mer, ô Jérusalem,
Et de la terre, ô Jérusalem,
Et la domination, ô Jérusalem,

Ազգաց լեզուաց, Երուսաղէմ։
Զի գան առ քեզ, Երուսաղէմ,
Ուղտերամակք, Երուսաղէմ,
Եւ ծածկեսցեն, Երուսաղէմ,
Ըզվայրըս քո, Երուսաղէմ։
Մադիանացիքն, Երուսաղէմ,
Եւ Գեփացիք, Երուսաղէմ,
Գան ի Սաբայ, Երուսաղէմ,
Քեզ բերելով, Երուսաղէմ,
Զոսկի ընտիր, Երուսաղէմ,
Նա և զյակինթ, Երուսաղէմ,
Հանդերձ քարամբք, Երուսաղէմ,
Պատուականօք, Երուսաղէմ,
Եւ զփըղձկութեան, Երուսաղէմ,
Ըզձայն առցեն, Երուսաղէմ։
Նոյն և խաշինքն, Երուսաղէմ,
Որ Կեդարուն, Երուսաղէմ,
Ժողովեսցին, Երուսաղէմ,
Առ քեզ եկեալ, Երուսաղէմ,
Հանդերձ խոյովքն, Երուսաղէմ,
Նաբէոթայն, Երուսաղէմ։
Զի մատուցեն, Երուսաղէմ,
Քեզ պատարագս, Երուսաղէմ,
Ի քաւութեան, Երուսաղէմ,
Սեղան սրբոյն, Երուսաղէմ։
Եւ Գալիլեացիքն, Երուսաղէմ,
Ի սաստիկ նըսեմեալ, Երուսաղէմ,
Յառնեն ի լոյս, Երուսաղէմ,
Ի քէն ծագեալ, Երուսաղէմ։
Եւ Տիւրացիքն, Երուսաղէմ,
Տրաքոնացիք, Երուսաղէմ,
Նա և Փիւնիկք, Երուսաղէմ,
Օտարացեալք, Երուսաղէմ,
Երկիրպագցեն, Երուսաղէմ,
Քեզ ի խոնարհ, Երուսաղէմ։
Առաւել փառօք, Երուսաղէմ,
Կարժեալ ցընծաս, Երուսաղէմ,
Ըստ առաջնոյն, Երուսաղէմ,
Եւս առաւել, Երուսաղէմ։
Քանզի տեսողքն, Երուսաղէմ,
Զարմանան, Երուսաղէմ,
Ընդ վերջին փառքդ, Երուսաղէմ։

Sur les nations et les races humaines, ô Jérusalem.
Chez toi se rendront, ô Jérusalem,
Les chameaux par troupes, ô Jérusalem,
Et ils rempliront, ô Jérusalem,
Tes campagnes, ô Jérusalem.
Les Madianites, ô Jérusalem,
Et les habitants d'Épha[1], ô Jérusalem,
Viendront de Saba, ô Jérusalem,
T'apportant, ô Jérusalem,
L'or le plus pur, ô Jérusalem,
L'hyacinthe, ô Jérusalem,
Avec des pierres, ô Jérusalem,
Précieuses, ô Jérusalem,
Et comme salut de bienvenue, ô Jérusalem,
Ils entendront la bonne nouvelle, ô Jérusalem.
Les brebis, ô Jérusalem,
De Cédar, ô Jérusalem,
Se réuniront, ô Jérusalem,
Accourant à toi, ô Jérusalem,
Avec les béliers, ô Jérusalem,
De Nabaïoth[2], ô Jérusalem,
Afin de s'offrir, ô Jérusalem,
A toi en sacrifice, ô Jérusalem,
Sur l'autel, ô Jérusalem,
D'expiation et de purification, ô Jérusalem.
Les Galiléens, ô Jérusalem,
Plongés dans les ténèbres, ô Jérusalem,
Se lèveront à la lumière, ô Jérusalem,
Qui jaillira de toi, ô Jérusalem.
Les Tyriens, ô Jérusalem,
Ceux de la Trachonitide, ô Jérusalem,
Ainsi que de la Phénicie, ô Jérusalem,
Tous les étrangers, ô Jérusalem,
Viendront se prosterner, ô Jérusalem,
Devant toi, dans l'humilité, ô Jérusalem.
Plus glorieuse que jamais, ô Jérusalem,
Tu te réjouiras, ô Jérusalem,
Comme tu le faisais jadis, ô Jérusalem,
Et même plus, ô Jérusalem;
Ceux qui te contempleront, ô Jérusalem,
Seront dans l'admiration, ô Jérusalem,
De la nouvelle splendeur, ô Jérusalem,

[1] Épha, en hébreu עיפה, canton de l'Arabie, qui avait reçu ce nom de l'un des fils de Midian (Genèse, XXV, IV; I Paralipomènes, II, XLVII; Isaïe, LX, VI). On ignore la position précise de cette localité, que les uns placent au sud-est de la mer Morte, dans le voisinage des Midianites, et les autres dans l'Arabie Heureuse.

[2] Cédar et Nabaïoth, contrées de l'Arabie Pétrée dont les habitants s'adonnaient à l'élève des troupeaux et au transport, à dos de chameaux, des marchandises du port d'Aïlah ou Ælana, sur la mer Rouge, dans les ports de la Phénicie. Nabaïoth est le pays des Nabathéens.

Տանդ Տեառնածոյ, Երուսաղէմ,
Տեսանելով, Երուսաղէմ,
Բիւրուց բիւրս, Երուսաղէմ,
Որք իբրև զամպս, Երուսաղէմ,
Թռուցեալ գայցեն, Երուսաղէմ,
Եւ որպէս ձագք, Երուսաղէմ,
Երամով գան, Երուսաղէմ։
Նոյն և նաւք, Երուսաղէմ,
Հասցեն առ քեզ, Երուսաղէմ,
Ընծայս բերցեն, Երուսաղէմ,
Գանձըս բազումս, Երուսաղէմ,
Որ ի կղզեաց, Երուսաղէմ,
Տանըդ սրբոյ, Երուսաղէմ.
Բարձեալ ուղտուց, Երուսաղէմ,
Հանդերձ իշօք, Երուսաղէմ,
Բերեն մեծութիւնս, Երուսաղէմ,
Ի Հընդկայնոց, Երուսաղէմ,
Հանդերձ փայտիւքն, Երուսաղէմ,
Պատուականօք, Երուսաղէմ.
Մարդիւ, սօսիւն, Երուսաղէմ,
Մայրիւ, նոճիւ, Երուսաղէմ։
Զի շինեսցեն, Երուսաղէմ,
Վարձեալ ըզյարկս, Երուսաղէմ,
Որ քանդեցին, Երուսաղէմ,
Եւ փլուցին, Երուսաղէմ։
Երանի երանի, Երուսաղէմ,
Այն տեսողին, Երուսաղէմ,
Նա և աւուրցն, Երուսաղէմ,
Ժամանակին, Երուսաղէմ,
Յորժամ լինէր, Երուսաղէմ,
Որ ասացին, Երուսաղէմ։
Բայց զեռ ի նոյն, Երուսաղէմ,
Կամ զեզերեալ, Երուսաղէմ,
Եւ պատառեմ, Երուսաղէմ,
Ըզսիրտըս սեաւ, Երուսաղէմ.
Հող ըզգըլխովս, Երուսաղէմ,
Ծեծեալ ծածկեմ, Երուսաղէմ.
Բախեմ ըզկուրծս, Երուսաղէմ,
Թանամ ըզծնօտս, Երուսաղէմ։
Չեմ մխիթարեալ, Երուսաղէմ,
Եւ ի յատենիս, Երուսաղէմ,
Չէք և սփոփանս, Երուսաղէմ.
Ինձ յայս բանիցս, Երուսաղէմ,
Բայց թէ տեսից, Երուսաղէմ,
Ըզքեզ ի փառս, Երուսաղէմ,
Լուսով լցեալ, Երուսաղէմ։
Դարձեալ կըրկին, Երուսաղէմ,
Ըստրուկ եղեր, Երուսաղէմ,

De la maison du Seigneur, ô Jérusalem;
Et en voyant, ô Jérusalem,
Comme par milliers, ô Jérusalem,
Semblables à des nuées, ô Jérusalem,
Ceux qui voleront vers toi, ô Jérusalem,
Et pareils à des poussins, ô Jérusalem,
Ils accourront par troupes, ô Jérusalem,
Les navires, ô Jérusalem,
Aborderont sur tes rives, ô Jérusalem,
T'apportant en présent, ô Jérusalem,
Quantité de trésors, ô Jérusalem,
Des îles, ô Jérusalem,
Pour ton saint temple, ô Jerusalem.
Des chameaux chargés, ô Jérusalem,
Et des ânes, ô Jérusalem,
T'apporteront les richesses, ô Jérusalem.
Des Indes, ô Jérusalem,
Et des bois, ô Jérusalem,
De prix, ô Jérusalem,
Le laurier, le platane, ô Jérusalem,
Le sapin et le cyprès, ô Jérusalem,
Afin de construire, ô Jérusalem,
De nouveau les édifices, ô Jérusalem,
Qui ont été détruits, ô Jérusalem,
Et renversés, ô Jérusalem.
Heureux celui, ô Jérusalem,
Qui verra cette rénovation, ô Jérusalem,
Heureux ces jours; ô Jérusalem,
Et ce temps, ô Jérusalem,
Où s'accomplira, ô Jérusalem,
La parole qui a été annoncée, ô Jérusalem
Mais à présent encore, ô Jérusalem,
Ma situation reste la même, ô Jérusalem,
Et je sens se déchirer, ô Jérusalem,
Mon cœur endolori, ô Jérusalem.
Ma tête couverte de poussière, ô Jérusalem,
Disparait sous ses flots épais, ô Jérusalem;
Je frappe ma poitrine, ô Jérusalem.
Mes joues sont inondées [de larmes], ô Jérusalem.
Je n'ai point de consolation à attendre, ô Jérusalem,
Dans le moment actuel, ô Jérusalem;
Aucun soulagement, ô Jérusalem,
Ne pourrait m'être procuré par tous mes discours, ô Jérusalem,
A moins que je ne te voie, ô Jérusalem,
Recouvrer ta gloire, ô Jérusalem,
Et devenir lumineuse, ô Jérusalem.
De nouveau, ô Jérusalem,
Tu as été soumise à l'esclavage, ô Jérusalem.

Ծառայ՝ ազատ, Երուսաղէմ,
Եւ աղախին, Երուսաղէմ,
Մեծ թագուհի, Երուսաղէմ։
Մի՛ անկցիս, Երուսաղէմ,
Առ քեզ անձրև, Երուսաղէմ։
Խոնարհեսցին, Երուսաղէմ,
Լերինք և բլուրք, Երուսաղէմ.
Լցցին և ձորքն, Երուսաղէմ,
Գաբաւոնին, Երուսաղէմ,
Եւ Կեդրոնի, Երուսաղէմ,
Ձորդ բարձրասցի, Երուսաղէմ,
Մինչև լիցի, Երուսաղէմ,
Գալ առ քեզ փրկիչ, Երուսաղէմ,
Դարձուցանել, Երուսաղէմ,
Ըզգերեալս, Երուսաղէմ,
Առնուլ ըզվրէժն, Երուսաղէմ,
Ի քո նեղչացն, Երուսաղէմ։

Աչա ինձ վայ, յորժամ լուայ
Զայն տրտմութեան այս ահագին,
Թէ բարձրացաւ սուրն Եսաւին.
Յերուսաղէմ քաղաք մեծին
Եմուտ որդին Հագարածին,
Եհան արտաքս ըզՍառային։

Նստաւ յաթոռն Մովսէսին
Ոչ Փարէսայ ազգ կամ ղևտին,
Այլ փոխանորդն Մահմետին,
Որում Գ[illegible]
Եւ զօրացաւ փառք Մահմետին,
Կուրացելոյն կոյր առաջնորդին.
Եւ բազմացաւ ձայն կանչողին,
Փոխան սրբոյ ժամահարին.
Եւ մերկացաւ սուր [illegible],
Որ էր ներհակ աւազանին։
Եւ մեր բարձաւ պատիւ մեծին,
Ընկաւ աթոռ հայրապետին,
Կործանեցաւ անկանգնելին,
Կոխան եղև անպատմելին։
Վայ թէ չլսի ձայն քարոզին
Նաև ի տաճար Գողգոթային.
Կամ թէ չունի սրբոյ վէմն
Երկրպագութ՝ ըստ պատշաճին.
Եւ ոչ պատիւ սուրբ Սիոնին,
Ոչ պաշտօնեայք գերեզմանին,
Ոչ երթևեկ ի տաճարին,
Ոչ ու խուռն ուրք Բեթղեհեմին,
Ոչ ձիթենիք ողոգոմին,
Եւ ոչ ժողովք Գալիլեային.

Et à la servitude, toi qui étais libre, ô Jérusalem,
Tu es devenue une servante, ô Jérusalem,
Toi, la grande reine, ô Jérusalem.
Puisse ne jamais tomber, ô Jérusalem,
La pluie sur toi, ô Jérusalem;
Puissent s'abaisser, ô Jérusalem,
Les montagnes et les collines, ô Jérusalem,
Et se combler les vallées, ô Jérusalem,
De Gabaon, ô Jérusalem;
Que la vallée, ô Jérusalem,
De Cédron s'élève, ô Jérusalem,
Jusqu'à ce que, ô Jérusalem,
Vienne à toi un sauveur, ô Jérusalem,
Pour faire rentrer, ô Jérusalem,
Tes captifs, ô Jérusalem,
Et te venger, ô Jérusalem,
De tes persécuteurs, ô Jérusalem!

Malheur à moi, quand j'entendis
Cette triste et terrible parole :
Le glaive d'Ésaü s'est levé
Contre la grande ville de Jérusalem;
Le fils d'Agar est entré,
Il a chassé le fils de Sara;
Sur le trône de Moïse s'est assis,
Non point la famille de Pharès, ni le lévite,
Mais le représentant de Mahomet,
Celui que l'on nomme kadhi (gh'ati).
La puissance de Mahomet a grandi,
De ce guide aveugle des aveugles.
On a entendu fréquemment la voix du crieur (muezzin),
Qui a remplacé le jamahar sacré.
Le glaive a été tiré du fourreau par le circoncis,
Cet ennemi de la sainte piscine.
Notre grandeur suprême nous a été enlevée;
Le trône patriarcal est tombé;
Il est tombé sans jamais pouvoir être relevé,
Pour être foulé aux pieds d'une manière indicible.
Hélas! la voix des prédicateurs est muette
Dans le temple du Golgotha;
La sainte pierre
Ne reçoit plus les adorations qui lui sont dues.
Plus d'honneur pour la sainte Sion;
Plus de ministres du saint Sépulcre,
Ni de concours dans le temple,
Plus d'affluence à Bethléhem,
Plus de branches d'olivier, le dimanche des Rameaux;
Plus de concours de peuple dans la Galilée.

Նաեւ ոչ բարբառ վարդապետացն
Յողորմութեան դրանցն լսելին·
Ի Բեթփագէ Բեթանիային
Նոյն ոչ նշանի բարբանչելին·
Եւ բիւրաւորք Յորդանանին,
Եւ ոչ միաբանութիւնք ի սուրբ լերին,
Եւ նաւուղիղք ի Տիբերիին;
Եւ ոչ ցանկացողք սուրբ սեղանին·
Նաեւ ոչ ի լեառն Թաբօրին
Ոք ոչ դիմէ այլ անդ յուխտին։
Կամ թէ հնչումն զանգակին
Նոյն ոչ լսի՝ ըստ պատշաճին,
Որք մեծաձայնըս գոչէին
Յաւուր սրբոյ աւագ զատկին,
Յորմէ բազումք դողային
Ի հնչմանէ ձայնից նոցին,
Նաեւ ծն անդ միտքըն հզգէին
Ի յօրըն մեծ յաներեկին։
Ահ թէ չմըտին ի սըրբոցն,
Զոր սրբութեանց սուրբ կոչէին·
Կամ պատարագ ոչ մատուցին
Ի սուրբ սեղան քաւարանին։

Եւ քահանայք առնուն կայտին
Ի հովանոց սուրբ տաճարին·
Նաեւ ոչ շըրջին շուրջանակին
Զորոս կոչեն դրուց Սիոնին·
Եւ երաժիշտք քաղցրաձայնաւորին
Երգեն նըման սերովբէին·
Եւ ալէլուք հոգեբըղխին
Պատուին ի փառս իմ Յիսուսին։
Եւ գոյ խորհուրդս Բեթղահեմին,
Զոր տօնէին յօր ծընընդին·
Չեն յայտ խընճոյքն որ լինէին,
Կամ երգարանքն և տասնաղին՞
Ո՞ւր է ժողով Յորդանանին,
Հանդիսաւոր սուրբ երամին·
Նաեւ կամ պատիւ սուրբ Սիոնին,
Նոյն հրաշալի գերազանցին։
Ո՞ւր են և փառք գերեզմանին,
Երկրպագուք Գողգոթային·
Կամ բազմամբոխ ժողով մեծին
Խաչին սրբոյ պատուականին·
Նաեւ ո՞ւր աղօթք կըրծաբախին
Նաեւ հառաչանքն որ լինէին։

1408. Il y a dans notre manuscrit բրուց, mot qui me paraît une faute de copiste, et que j'ai cru devoir remplacer par դրուց, littéralement *en dehors de la porte*, c'est-à-dire, à *l'extérieur*.

La voix des docteurs
A cessé de se faire entendre à la Porte de la miséricorde;
A Bethphagé, voisine de Béthanie,
Tout souvenir de miracle a disparu.
Plus de foule empressée au Jourdain,
Plus de moines sur la sainte montagne;
Plus de nautoniers sur le lac de Tibériade;
Plus de fidèles avides de s'approcher de la sainte Table;
Sur le Thabor
Personne ne va accomplir un pèlerinage lointain.
Le son des cloches
Ne résonne plus dans les occasions solennelles,
Ce son qui retentissait si fortement
Le saint jour de Pâques,
Qu'il faisait trembler nombre de personnes,
Qui en étaient émues,
Tandis que tous les esprits étaient attentifs
A l'arrivée du jour qui n'aura pas de nuit.
Hélas! on n'entre plus dans le sanctuaire,
Dans le Saint des saints;
Le sacrifice
N'est plus offert sur l'autel d'expiation;

Les prêtres ne forment plus de chœurs
Dans l'asile du saint temple,
Et ne marchent plus tout autour
Du lieu que l'on appelle l'enceinte extérieure de Sion.
Les chantres à la voix mélodieuse
Ont cessé leurs accents pareils à ceux des séraphins;
Les *alleluia* du chantre inspiré par l'Esprit saint
Ne retentissent plus en l'honneur de mon Jésus.
A Bethléhem, plus de mystère
Célébré le jour de la Nativité,
Les solennités ont pris fin;
Plus d'instruments de musique et de décachorde.
Où est le concours, au Jourdain,
D'une troupe en fête?
Où sont les honneurs rendus à la sainte Sion,
Qui est admirable et excellente,
Et au saint Sépulcre?
Où les adorateurs prosternés sur le Golgotha?
Et cette foule immense,
Qui venait adorer la noble et sainte Croix?
Où les prières accompagnées de coups sur la poitrine
Et de soupirs?

Զանց առնեմ առել զոր առնէին
Աղախնաւորք Աստուածածնին,
Եւ կամ ի մէջ սուրբ տաճարին,
Ուր է տեղի սուրբ խաչգիւտին,
Ուր և երկրպագանէին
Նշան կենարար փրկչոյ խաչին.
Որ թէ լինէր լսել ձայնին,
Թէ արդ լինի ըսքանչելին,
Ի գերեզմանն Աստուածային,
Վառեալ լուսոյ անդ կանթեղին:
Արդ ո՞ւր են փառք որ չերևին
Եւ կամ պատիւս այս որ հլրսին:
Ո՞ւր իցէ թագ թագաւորին,
Եւ կամ աթոռ հայրապետին.
Ո՞ւր քահանայք պատարագին,
Կամ սարկաւագք պաշտօնէին.
Ո՞ւր են դպիրք սրբոյ ուխտին,
Դրան անգաւորքըն խորանին.
Ո՞ւր դռնապահքըն տաճարին,
Կանթեղշիջք գերեզմանին.
Ո՞ւր մենաւորք մենաստանին,
Հրեշտակակրօնքն որ ձըգնէին.
Ո՞ւր են հըսկօղք անապատին
Մարմնով յերկրի գոլ անմարմին:
Ո՞ւր զինուորք որ չերևին,
Կամ մենամարտք որ յաղթէին.
Ո՞ւր են իշխանքն որ նըստէին
Ի հանդէս դատաստանին.
Կամ պահապետք գըլխոյ գահին,
Որք ճարտասանքըն կոչէին.
Ո՞ւր կռուօղքն ի ճակատին,
Կամ ըմբշամարտք պատերազմին.
Ո՞ւր ձիավարժքն ի թատերին,
Նիզակակիրքըն վահանին.
Ո՞ւր են նետողք նըպատակին,
Սուսերամերկք դիպող բազկին.
Ո՞ւր պարսաւորք ճահողակին,
Կամ չարկընկէցք հինից հնարին.
Ո՞ւր զրահաւորք սաղաւարտին,
Կամ ռամկական ժողով ռամկին:
Ո՞ւր է փեսայն ի ծաղկոցին,
Կամ ո՞ւր հարսունքն առագաստին.

1464. L'expression չարկընկէց est composée de ընկէց « celui qui lance », et չարխ, en persan چرخ, mot qui entre autres significations a celle d'*arbalète*, ou *arc fortement tendu*.

J'omettrai de raconter
Ce que faisaient les voués à la Mère de Dieu
Et leurs cérémonies dans le saint temple,
Où la Croix fut trouvée,
Et où était adoré
Ce signe vivifiant de notre Rédemption;
Lorsque leur voix se faisait entendre,
Un miracle se produisait;
Du saint Sépulcre
Les lampes prenaient feu.
Qu'est devenu cet éclat, maintenant disparu,
Et cette splendeur si vantée?
Où est la couronne du roi
Et le trône du patriarche?
Où sont les prêtres qui célébraient les saints mystères,
Et les diacres coopérant à leur ministère?
Où sont les clercs de la sainte Église,
Et le clergé?
Où les portiers du temple,
Et ceux qui étaient chargés d'éteindre les lampes du saint Tombeau?
Où sont les religieux du monastère,
Vivant à la manière des anges et dans les macérations?
Où les ascètes du désert,
S'efforçant de devenir incorporels dans leurs corps sur cette terre?
Que sont devenus les guerriers, maintenant disparus,
Et les champions de la victoire?
Où sont les chefs qui siégeaient
En jugement solennel,
Et ceux qui occupaient les premiers rangs,
Et qui avaient le titre d'orateurs?
Où sont ceux qui, sur le front de bataille, engageaient le combat,
Et les athlètes qui soutenaient la lutte?
Et les chevaliers qui figuraient dans les tournois?
Où les soldats armés de lances et de boucliers?
Et les archers qui atteignent au but,
Et les soldats, tenant l'épée nue d'un bras ferme?
Où les frondeurs au coup assuré,
Et ceux qui se servaient de l'arbalète dans les incursions?
Où les soldats armés de cuirasses et la tête couverte d'un casque,
Et le simple peuple?
Où est l'époux dans le jardin des fleurs,
Et la mariée dans le pavillon nuptial?

Ո՞ւր են կուսանքն ի սենեակսն,
Կամ օրիորդունքն ի յանկիւնսն·
Ո՞ւր տեառնորդիքն ի բազմոցսն,
Կամ տալիթայքն ի պարտակսն·
Ո՞ւր են արքունայք թագաւորսն,
Եւ կամ կանայք որ ձոխք էին·
Ո՞ւր են ծառայք նաժիշտք նոցին,
Կամ աղախնեայք աղջկանց տոհմին·
Ո՞ւր են խնճոյք կաքաւք սոցին,
Եւ կամ ձեռաց կայթրս ծափին։
Ո՞ւր մատռուակքըն գովելին,
Որք ապակոյն սպաս տանէին·
Նոքա որ բարձեալք բերէին
Ծայրիւ մատանց եռատարակին·
Ո՞ւր սեղանակալքըն սեղանին,
Նոքա ում խորտիկքըն յանձնէին,
Որք հրեշտակաց նմանք էին
Նա սեղանոյն աստուածային·
Ո՞ւր վեստարիւծքըն վեստարին,
Շէկք և խարտեաշքըն կարմրերփին,
Նոյն որ ծաղկեալ գունով սևին
Շուրջ ըսպիտակ այտիւք ծնօտին,
Ո՞ւր են մանկունքն որ խաղային,
Եւ խրախտատրդք որ խրախտային·
Ո՞ւր գինարբուքն որ ըմպէին,
Զոր և յատեանըս գովէին·
Ո՞ւր բանբասացքըն գովեստին,
Կատակերգուքն ի ժողովին·
Ո՞ւր ջնարահարք երգարանին,
Կամ խաղացողքըն Ճատրակին·
Ո՞ւր խոհարարքն որ հոգային
Ըզզանազան հաց մաքրենին·
Ո՞ւր հնարաւորքըն բաժակին,
Որք ծաղկահամ զայն կազմէին,
Ո՞ւր բարձրաբերձ աշտարակին
Շինուածք սրահից զարմանալին·
Ո՞ւր են խորանք բոլորակին,
Եւ խիտ առ խիտ կամարք նոցին,
Որք երանգոց գունոյն էին,
Նմանք երկնիցըն խորանին·

1483. B. սենեկալքըն. — 1487. Les mots վեստարիւծ et վեստարին sont une altération du latin *vestiarius* et *vestitor*, en grec βεστιάριος, βεστήτωρ et βέστης, officiers qui avaient soin de la garde-robe du souverain à la cour de Byzance, et qui étaient chargés d'en présenter les différentes pièces au *vestiarites*, βεστιαρίτης, pour que celui-ci en revêtît l'empereur. La dignité de βεστάρχης et de πρωτοβεστιαρίτης était une des plus considérables. (Cf. Codinus, *De Officiis magnæ ecclesiæ et aulæ constantinopolitanæ*, cap. II, et *ibid.* Goar, note 9.) Les RR. PP. Mékhitharistes, de Venise, dans leur *Nouveau dictionnaire arménien*, ont omis la signification de ces mots, comme leur étant inconnue; et le P. Dchakhdchakh, dans son *Dizionario armeno-italiano*, les a traduits d'une manière conjecturale et fausse.

Où sont les vierges retirées dans les appartements secrets,
Et les damoiselles dans l'intérieur de la maison?
Où sont les fils de famille assis à la même table,
Et les jeunes filles cachées sous le voile?
Où sont les pompes de la famille royale,
Et les dames de haut parage?
Où les servantes et les caméristes,
Et celles attachées au service des jeunes filles nobles?
Où sont les fêtes et les danses,
Les battements de mains et les applaudissements?
Où sont ces beaux échansons
Qui apportaient les coupes à boire
Et les présentaient
A l'extrémité de trois doigts?
Où sont les sénéchaux de la table,
Qui avaient l'intendance des aliments,
Et qui, semblables à des anges,
Stationnaient auprès du banquet céleste?
Où sont les officiers du vestiaire,
Blonds et fauves, tirant sur le rouge,
Parés d'un costume noir,
Rehaussé par le blanc qui encadrait leur figure?
Où sont les jeunes gens qui se livraient à des jeux,
Et ceux qui étalaient leur fierté?
Où ces convives qui buvaient,
Illustres dans ces réunions?
Où les chanteurs de louanges avec leur luth,
Et les chanteurs de farces, dans les assemblées,
Et ceux qui s'accompagnent de la lyre,
Et les joueurs d'échecs?
Où sont les cuisiniers chargés
De préparer les différents pains de choix?
Où les officiers de la coupe,
Qui mêlaient au vin l'arome des fleurs?
Où sont et la tour élevée,
Et les portiques d'une admirable structure,
Et les coupoles à forme ronde,
Et leurs voûtes étagées l'une sur l'autre,
Brillant de couleurs variées,
Et semblables à la coupole céleste?

Ո՞ւր շուշանաց ծաղկարանին,
Տանց և յարկաց զոր կազմեցին,
Որք ի քարանց յականց վառեալց
Եւ ի յանփտուտ փայտից կազմին·
Որք որ գահոյք փղոսկրեին,
Մանրահիւսած շարուած փայտին:
Ո՞ւր է աթոռըն հընդկային,
Կազմեալ ոսկւով ընդ արծաթին:
Ամենն անցան՝ նըման ծաղկին,
Կամ որպէս խոտն առաւօտին,
Որ ընդ ծաղկելըն թառամին,
Եւ փոյթ ընդ փոյթըն չորասցին,
Ըստ անհաստատ բոյս տանեսին,
Որ խորշակաւ հարեալ ընկճին,
Եւ ոչ ի բուռըն հընձողին
Նա ժողովի՝ ըստ ցորենին:
Զի զարմանամ զոր ինչ տեսին
Աչք իմ ըզգործս որ պատահին·
Թէ յակնարկել բըրացն ակին
Քրիստոնէից ժողովն անցին,
Եւ անառակ ամրոցանին,
Պարըսպաւոր քաղաքք նոցին,
Զորըս ջանիւ մեծ շինեցին,
Որքան և էր թուական նոցին,
Թէ պահելոյ տեղ լինիցին
Անձանց նոցա յաւուր մարտին·
Նա ոչ կացին ըստ աւազին,
Որ ի տղայոց շինեալ լինին·
Որում և բոյնըս տատրակին,
Ըստ անհաստատ գործոյն՝ կոչին·
Նոյն և նըման ոստայն սարդին,
Անհետացան որ չերևին:
Այսպէս և այս ամէնս անկին,
Եւ ոչ ամիս մի չըտևեցին
Շէնքըն ամենայն որ շինեցին
Որպէս ոստայնս ինչ ոչ կացին:
Մինչդեռ ի նոյն էաք սըգին,
Եկեալ եհաս մեզ ձայն գուժին,
Թէ շարժեցաւ տունն Եսաւին,
Ընդ համարակ ցեղ Քանանին,
Ժառանգաւորքըն Հագարին,
Օտար որդիքըն Սառային,
Միահաղոյն յերկիր մըտին
Որ է նահանգըն Սուրային:
Առին աւար և գերեցին
Զորս ընդ ձեռամբն Անտիոքին·
Տապալեցին յատակեցին,
Խանխնայաբար հըրդեհեցին,

Où sont les jardins plantés de lis,
Les maisons ornées de lambris
Qui étincelaient de pierres précieuses et de cristal,
Et faits de bois incorruptibles,
Et où étaient disposés des siéges en ivoire,
Et en bois de marqueterie?
Où est le trône en bois des Indes,
Rehaussé d'or et d'argent?
Tout cela est passé comme la fleur,
Ou comme l'herbe née avec l'aurore,
Qui, à peine fleurie, se flétrit
Et bientôt se dessèche;
N'ayant qu'une racine mal assurée sur le toit,
Elle tombe, frappée par la chaleur du soleil,
Et dans la main du moissonneur
Elle n'est pas recueillie, comme le blé.
Je m'étonne de ce qu'ont vu
Mes yeux, et des actions qui ont été accomplies,
Et comment en un clin d'œil
La nation des chrétiens a disparu,
Avec leurs forteresses inexpugnables
Et leurs villes entourées de remparts,
Bâties par eux à grands efforts;
Malgré leur nombre,
Et quoiqu'elles fussent un lieu de sûreté
Pour eux, au jour du combat,
Elles n'ont pas tenu plus que le sable
Avec lequel les enfants font des constructions,
Et que l'on appelle nids de tourterelles,
A cause de leur défaut de solidité;
Comme la toile de l'araignée,
Elles ont été balayées sans laisser de trace.
Ainsi sont tombées ces places,
Sans tenir un mois seulement.
Tout ce qu'il y avait d'édifices
A été emporté, comme une toile.
Tandis que nous étions encore livrés à notre douleur,
Survint la triste nouvelle
Que la nation d'Ésaü s'était mise en mouvement,
Toute la race des Chananéens,
Les héritiers d'Agar,
Les fils que Sara n'a point enfantés,
Et qu'ils étaient entrés tous à la fois dans la contrée
Qui est la province de Syrie;
Ils enlevèrent et firent prisonniers
Les habitants du territoire d'Antioche,
Rasèrent les édifices jusqu'aux fondements,
Les livrèrent impitoyablement aux flammes,

Քանդեցին կործանեցին,
Զեկեղեցիսն քակեցին.
Գերեցին կողոպտեցին,
Զվանատունսն փլուցին:
Զարըս սըրոյ ճարակ տային
Եւ ըզկանայսըն այրեցին,
Զորդիքն ի ծոց մարցն եփէին:
Եւ այսպիսի ողորմագին
Գործ չար ապիրատն գործէին:
Իսկ յորժամ այսըր տիրեցին,
Եւ տըզըրկի նըմանեցին,
Զամենեսեան ջանալ կրէին
Ի յորովայն մահապերին,
Եւ Բարձրելոյն եղջիւր ածին,
Որպէս Նեբրովթն այն առաջին:
Նոյն և իշխանսն անարգեցին,
Ըստ անթլփատ Գողիաթին:
Ապա ընդ լեառն Տորոսին
Մըտին յաշխարհն Կիւլիկին,
Ուր իշխեցող էր Հայկազնին,
Անձայաղթող Լեւոն արին:
Ընդ մեզ եհաս խնամքըն վերին,
Եւ քաղցրացաւ կամք անեղին:
Եհաս ի դաշտ լայն անդորին
Ըսպատակաւ զօրու նոցին:
Լեւոն իշխան Կիւլիկեցին,
Մանուկ տիովք, բնութեամբ բարին,
Առ ի ձեռըն զերկսայրին,
Զայնեաց զանուն սըրբոյ խաչին,
Այլթեաց ի մէջ պատերազմին,
Որպէս զարծիւ խոկ յերամին.
Աշհար ըզկուշտ երիվարին,
Խարշատեցոյց ի մէջ նոցին.
Ուղղեաց ըզխոց իւր նիզակին,
Եհար ըզսիրտ գըլխաւորին,
Դիաթաւալ կացոյց դաշտին:

Les abîmèrent, les détruisirent.
Démolirent les églises,
Les pillèrent et les mirent à sac.
Abattirent les monastères,
Égorgèrent les hommes,
Firent périr les femmes par le feu,
Et rôtir les enfants dans le sein de leurs mères.
Telles furent les cruautés
Et les atrocités qu'ils accomplirent.
Lorsqu'ils eurent établi ici leur domination
Ils se firent les émules de la sangsue,
Et s'efforcèrent de faire tout tomber
Dans le gouffre de la perdition.
Ils bravèrent le Très-Haut,
Comme jadis Nemrod;
Ils traitèrent avec mépris nos chefs,
A l'imitation de Goliath l'incirconcis.
Ensuite, gagnant la chaîne du Taurus,
Ils pénétrèrent dans la Cilicie,
Où régnait le descendant de Haïg,
Le victorieux et brave Léon[1].
En ce moment la bonté de Dieu nous fit sentir ses effets,
Et la volonté de l'Être incréé s'adoucit pour nous.
Dans une vaste plaine
Arriva l'armée ennemie.
Léon, prince de la Cilicie,
Jeune d'âge, bon de caractère,
Prit en main son épée à deux tranchants,
Et, invoquant le nom de la sainte Croix,
Se précipita au milieu des bataillons ennemis
Comme un aigle sur une troupe [de colombes].
Pressant les flancs de son coursier,
Il fondit sur les infidèles,
Et, dirigeant droit sa lance,
Il frappa leur général au cœur,
Et l'étendit mort au milieu du champ de bataille.

[1] Le poëte décrit avec une complaisance marquée les succès qu'obtint Léon II contre les détachements que Saladin avait envoyés vers le nord, dans l'Amanus, lorsque le sulthan, après la conquête de Jérusalem, envahit, l'année suivante, le littoral de la Syrie et le territoire d'Antioche. (Cf. sur cette expédition de Saladin, Ibn Alathir, *ad annum* 584, t. XII, éd. Tornberg, p. 210; Aboulféda, *Annal. Moslem.* t. IV, p. 86-92; Behâ-eddin, *Vita et res gestæ Saladini*, cap. XLII-XLVII, et Aboulfaradj, *Chron. syr.* p. 415-416.) Le récit de ces auteurs a été résumé par M. Reinaud, dans ses *Extraits des chroniques arabes, relatifs aux croisades*, p. 224-231.

Léon II venait de succéder, depuis un an environ, à son frère, R'oupên II, avec le titre de *baron*, conféré par les croisés aux R'oupéniens, ou sous le titre arménien de *prince des princes*, իշխան իշխանաց. On sait que ce n'est qu'en 1198 que, le premier des chefs de la Petite-Arménie, il prit la qualification de roi et rompit tous les liens de vasselage qui unissaient à l'empire d'Orient ses prédécesseurs; il plaça son royaume sous la suzeraineté de l'empereur d'Allemagne et du pape.

Որք անդ եկին առնել երկրին,
Վ[illegible] եղեն ի սրոյ նորին։
Յաղթեալ նոցա մեծ կորովին,
Մատնեաց ի սուր խոր սուսերին,
Այնքան զի գետք արեան ելին։
Աճապարեալ յետ նահանգին,
Եւ փախուցեալք կորընչէին։
Քանզի ընդհետ հասեալ քաջին
Եւ կոտորեաց ի լայն դաշտին։
Զի որպէս ձայն մայրեւորին,
Այնպէս հընչէր կոտորածին։
Ոչ ոք ի յինչըս կարասին
Հայել ընդաւ ոչ իշխէին·
Զի այս պատուէր էր իշխանին
Միայն ի սուր մաշել զնոսին։
Եւ մազապուրծ ոմանք ելին,
Գնան ի յիւրեանց տունն արարին·
Անցեալք ի յայնկոյս Տօրոսին
Ի շառաչման ձայնէ ահին։
Եւ ժողովեալք ի լայն դաշտին,
Որում Արեգ քաղաք անուն։
Անդ մակաղէ Կեդարացին,
Եւ հարկանէ զցից վրանին,
Հուպ ի քաղաքս Գերմանիկին,
Որում Մարաշ նորոգ անուն,
Հանդերձ կանամբք, մանկունք զարմին,
Նոյն և խաշամբքըն Նաբէովթին,
Նա և ուղտովքըն Գեփայցին։
Որ են որդիքն Իսմայէլին,
Անդ ի յամրոցըս գարանին,
Որպէս և բուք ի ծակս վիմին։
Ապա ընդհետ մտեալ քաջին,
Առիւծաբար ուժով բազկին,
Եւ անդ եհար դարձեալ կրկին,
Ըստ առաջին նոյն հարուածին,
Յականաւոր մեծի տօնին,
Յաւուր ունայն զատկի նոցին։
Չունիմ ասել զոր անդ ցուցին
Ըզհրաշագան գործըս քաջին,
Այն որ Տերամբ ընդհայրենին

Ainsi ceux qui étaient venus pour s'emparer de la contrée
Furent abattus par son glaive;
Ce héros les repoussa,
Et les passa au fil de l'épée,
Au point que les fleuves roulèrent des flots de sang.
S'échappant en toute hâte hors du district,
Ils prirent la fuite et furent exterminés;
Le vainqueur, s'attachant à leurs pas,
Les massacra, dans la vaste plaine.
Comme le bruit des coups d'un bûcheron,
Ainsi était le fracas du carnage.
Dédaigneux du butin et des richesses de l'ennemi,
Aucun des soldats ne songea à y jeter les yeux;
Car le prince avait recommandé
De s'attacher uniquement à les massacrer.
Quelques infidèles se sauvèrent avec peine,
En se dirigeant droit vers leur pays,
Et repassèrent le Taurus,
Effrayés par de terribles clameurs;
Ils se réunirent dans la grande plaine
A laquelle la ville d'Arek donne son nom[1];
Là l'habitant de Cédar fait paître ses troupeaux
Et plante le pieu de sa tente,
Non loin de la ville de Germanicia,
Qui, dans les temps modernes, se nomme Marasch,
Avec ses femmes, ses enfants et sa suite,
Les troupeaux de Nabaïoth
Et les chameaux d'Épha[2];
Les fils d'Ismaël
Étaient embusqués là dans des lieux fortifiés,
Comme des hiboux dans le creux des rochers.
Le brave [Léon], fondant sur eux,
Comme un lion, de son bras vigoureux,
Les déconfit de nouveau, à cette place même,
Comme il l'avait fait précédemment.
C'était à l'époque d'une fête solennelle,
Le jour de leur vaine Pâque.
Je n'ai point à dire les prodiges de valeur
Et les hauts faits admirables du brave [Léon],
Ce prince qui, avec l'aide du Seigneur, s'assit

[1] Arek était un couvent fortifié qui s'élevait sur le revers occidental de l'Amanus ou Montagne-Noire, entre la Cilicie et la Syrie. Comme l'enceinte de ce monastère renfermait sans doute des habitations occupées par les gens de service et les colons qui cultivaient les terres des moines, l'auteur a cru devoir, dans son langage poétique, qualifier Arek du nom de *ville*. Plus loin il énumère pareillement, parmi les places fortes que prit Saladin, le couvent de Schough'r, qui était situé aussi dans l'Amanus.

[2] Par ces noms bibliques, le poëte entend les Turkomans nomades dispersés dans la partie du Taurus qui sépare la Cilicie d'avec la Syrie, et dont les descendants y vivent encore, disséminés sur les hauteurs et dans les vallées du Giaour-Dagh, ainsi que dans le Zeytoun et le pachalik d'Adana.

Նստաւ զաթոռ ժառանգ բարին,
Լեւոն սիրողն Քրիստոսին,
Խնամեալ աջոյն Յիսուսին,
Շարժեալ կամօք սա Արարչին,
Այն որ յաւէտ էր ընդ նմին.
Եւ ժամանեալ անդ վէրբոտին,
Ահեցոյց նոցա զինքն ահագին.
Արար զզատօնըն սուգ նոցին,
Զենեաց մանկունսն զոհ նոցին.
Փոխան մրեան անբան գառին,
Զարիւն նոցա եհեղ յերկրին.
Արբոյց զդուստր Բաբելոնին
Մրուր բաժակի խառնեալ յարիւն.
Թշուառական Քաղդէացին
Խաւարեցաւ յահէ նորին.
Խոցոտք ըզխոցսըն զոր հարին,
Էառ ըզվրէժ արեան նոցին,
Չարոյց փոխան պատժապարտին,
Դարձոյց ըզցաւսն ի գլուխ նոցին.
Եհար փոխան, ըստ տասնեկին,
Զորդիսըն խորթ Հագարածին.
Եւ Տէր ըմպել չար հպարտին
Ձեռամբ նորին զբաժակ մրրին,
Եւ զօրացաւ իմ Հայկազին,
Այն որ սակաւ մխիթարին.
Կալեալ մանկանց Բաբելոնին
Հարեալ ընդ դէմըս փըշրէին.
Զի կանխասաց գիրըն լըցցին
Երգարանեալն ի սաղմոսին.
Թէ՝ երանի որք հատուցին
Քեզ փոխարէն զոր կրեցին.
Առ դու ընկալ քեզ փոխ կրկին
Ի ձեռանէ Տեառըն բաժին.
Դարձեալ մընա կատարածին.
Առքա զգերիչսըն գերեցին,
Եւ ըզզըրուիչսըն լըլկեցին,
Ըզհարկանօղսըն խիստ հարին,
Եւ սպանօղըսն բերեանց սպանին.
Էառ զաւարըս պերողին,
Զանբան ժողով բանականին.

Sur le trône de ses pères, dont il fut le digne héritier,
Léon, ami du Christ,
Soutenu par la droite de Jésus,
Mû par la volonté du Créateur,
Qui était sans cesse avec lui.
Arrivé sur le théâtre de l'action,
Il se montra terrible aux ennemis;
Il changea leur fête en deuil,
Et immola leurs jeunes gens, pour leur tenir lieu de victimes;
A la place du sang des agneaux, animaux sans raison,
Il répandit leur sang sur la terre.
Il fit boire à la fille de Babylone
Le calice rempli de la lie mêlée au sang.
Le Chaldéen infortuné
Perdit la lumière, par la terreur qu'il éprouvait.
Les coups [de Léon] répondirent à ceux des infidèles;
Il tira vengeance de leurs meurtres,
Leur rendit le mal qu'ils avaient fait et qu'ils méritaient,
Et fit retomber les calamités sur leurs têtes.
Une vengeance dix fois plus grande
Atteignit les fils d'Agar, fils illégitimes;
Le Seigneur fit boire à un ennemi orgueilleux,
Par la main de Léon, la coupe amère de la lie.
Il resta victorieux, notre descendant de Haïg,
Et nous donna un peu de consolation [1].
Les enfants de Babylone furent faits prisonniers,
Frappés à la face et taillés en pièces;
Afin que fût accomplie la prophétie
Consignée dans les chants du Psalmiste :
« Bienheureux ceux qui te rendront
« Ce qu'ils ont souffert de toi;
« Et toi, reçois à ton tour
« La rétribution que dispense la main du Seigneur [2]. »
Mais attendez maintenant la fin.
Ils s'emparèrent de ceux qui étaient venus pour faire des prisonniers;
Ils tourmentèrent leurs persécuteurs,
Frappèrent rudement ceux qui voulaient les battre,
Massacrèrent ceux qui leur apportaient la mort.
[Léon] enleva le butin de ces ravisseurs
Et leurs troupeaux,

[1] Les représailles des Arméniens contre cette agression de Saladin furent le commencement de la guerre que, depuis lors, les sulthans d'Égypte ne cessèrent de faire aux Arméniens, et qui dura, avec des intermittences de repos très-courts et d'hostilités terribles, jusqu'en 1375, époque où le royaume de la Petite-Arménie, dernier boulevard des chrétiens en Orient, succomba sous les armes du sulthan mameloak Mélik-Elaschraf Scha'ban.

[2] Psaume CXXXVI, VIII et IX.

Տարաւ ի մայր իւր քաղաքին,
Որ էր Սիսուան անմատչելին։
Որպէս եւ զօրք Աղեքսանդրին
Անդէն հարին զԴարեհին.
Նոյնպէս և սա արքայց նոցին
Լաւ նմանող Մակեդոնին.
Այս ազատիկ մեծ կորովին
Արար անուն իւր յաւիտենին։
Իբր էր նման Մակաբէին,
Յաղթող ի մեծ պատերազմին,
Որ որպէս Հայկն առաջին,
Եհար զԲէլ նետիւ բազկին.
Եւ կամ Տրդատ զօրութեամբ գետափին
Փլուցեալ ոտիւք զափնաքարին։
Սա գերագոյն Արտաշիսին,
Անձամբ որ յաղթեաց Կրիսոսին։
Նման եղև սա Տիգրանին
Եւ զԿրասոս սատակողին։
Կարդամ եւ վաշ իմ իշխանին,
Եւ աղօթեմ կենաց նորին.
Որ ի յազգէ Արամենին
Երևեցաւ նշան բարին.
Զորոյ տացէ զկեանս նորին
Երկայն աւուրբք Տէր կենդանին։

Et les conduisit dans sa capitale,
A Sis l'inexpugnable.
De même que les troupes d'Alexandre
Défirent en cet endroit celles de Darius[1],
Ainsi les infidèles furent battus par Léon,
Émule du héros macédonien;
Notre grand et brave [souverain]
Rendit son nom illustre à jamais,
Semblable à [Judas] Machabée,
Vainqueur dans de grands combats;
A Haïg, qui autrefois
Renversa Bélus d'un coup de flèche[2];
A Tiridate, lorsque la rive d'un fleuve
S'écroula sous la pression de son pied[3];
Plus grand qu'Ardaschès,
Qui défit Crésus[4];
Pareil à Tigrane,
Qui extermina Crassus[5].
Je crie bravo à notre prince,
Et je prie pour la prolongation de sa vie,
Lui qui, issu de la race d'Aram[6],
A apparu comme un signe éclatant.
Qu'il obtienne une existence
Remplie de jours, du Seigneur vivant!

[1] A la bataille d'Issus.

[2] La légende épique du combat dans lequel Haïg, le père de la nation arménienne, vainquit Bélus, roi d'Assyrie, nous a été conservée par Moïse de Khoren, *Hist. d'Arménie*, I, XI.

[3] Il est ici question d'un trait de bravoure par lequel le roi d'Arménie, Tiridate II, se distingua dans la guerre de Carus contre les Perses, et que rapportent Moïse de Khoren (II, LXXIX) et saint Nersès Schnorhali (*Histoire rimée d'Arménie*, vers 405-417). « L'empereur Carus, dit Moïse, rassembla ses troupes, afin de livrer combat au roi des Perses, Ardaschir [Babégan]. Après avoir obtenu la victoire, il retourna à Rome. Ardaschir, ayant appelé à son aide nombre de peuples, et entre autres les Arabes du désert, attaqua de nouveau les Romains des deux côtés de l'Euphrate. Il tua Carus à R'inôn, Ռինոն, ainsi que le fils de ce dernier, Carinus, qui marchait contre Gor'nag, dans le désert, en compagnie de Tiridate. Carinus et ses troupes ayant été taillés en pièces, ceux qui échappèrent à ce désastre prirent la fuite. Tiridate, dont le cheval était blessé, ne pouvant courir avec les fuyards, prend ses armes et les harnais de sa monture, et se jette à la nage dans les flots vastes et profonds de l'Euphrate, pour aller rejoindre le gros de l'armée, où se trouvait Licinius. » Ce récit de Moïse sur la fin de Carus s'éloigne considérablement de celui d'Eutrope et de Vopiscus, qui racontent que ce prince périt auprès du Tigre, frappé de la foudre.

[4] Ce passage fait allusion à une légende, d'après laquelle le roi d'Arménie, Ardaschès I[er], qui vivait au II[e] siècle avant notre ère, aurait fait prisonnier Crésus, qui lui est antérieur de près de 400 ans, et mis fin au royaume de Lydie. Quoique Moïse de Khoren reconnaisse positivement (II, XII et XIII) que Crésus vivait deux cents ans avant Nectanébis, roi d'Égypte, et Nectanébis, deux cents ans avant Ardaschès, cependant, entraîné sans doute par un sentiment d'orgueil national, il a adopté cette tradition sans s'inquiéter du grossier anachronisme qu'elle suppose, et en prétendant s'appuyer de l'autorité de quatre historiens grecs, Polycrate, Evagre, Camadrus et Phlégon.

[5] C'est à Tigrane le Grand que la tradition, telle qu'elle est rapportée par Moïse de Khoren (II, XVII), attribue la gloire d'avoir défait et tué Crassus.

[6] L'un des plus anciens rois de la première dynastie arménienne, celle des Haïciens. Il était le sixième descendant de Haïg. Il s'illustra par ses conquêtes dans la Mésopotamie, l'Assyrie et l'Asie-Mineure, et agrandit considérablement ses États. C'est de lui que Moïse de Khoren (I, XIII) fait dériver le nom d'*Arménie*, « par lequel, dit-il, les Grecs et les Perses désignaient ce pays que les nationaux ont toujours appelé Հայաստան, *Haïasdan*. »

Եւ արդ յետ այսր ամենայնին
Սակաւ աւուրք գնացեալցին·
Նաւա դարձեալ ի գլուխ ամին
Եւ ի կատար տարեկանին,
Մինչ բարութեան ակն ունէին
Այն որ խապառ հարեալքն էին,
Որք և յուսով սպասեալ կային,
Եւ յար ընդ ծովըն դիտէին,
Եհաս դարձեալ ձայն տրտմագին,
Եկեալ գուժկանն Անտիոքին·
Թէ ահա գայ Արաբացին
Բազում զօրօք յաշխարհ քոյին:
Ուստի ընդ գալ ահեղ ձայնին,
Փութով եհաս արշաւ կրկին·
Եկեալ անդէն զետեղէին
Շուրջանակա Լաւոդիկին,
Ծածկեալ ըզլայն երեսս դաշտին,
Որպէս ըզջուր ծովու մեծին:
Նաւա տուին տալով նոցին
Եւ ոչ ցուցին արիութիւն·
Զորս և ծախեալ զամենեսին
Ըստ արժանեաց վաստաց նոցին:

Առ զԱնտարադ յեզր ծովին,
Ուր է տաճարն Աստուածածնին·
Աւար կործան զամենեսին,
Զի ծանիցեն ըզՏէր նոցին:
Քանզի ի յինչսըն յուսային,
Եւ ի բազկին կարողութիւն·
Նոյ պարըսպօքն ամրանային,
Եւ ի շինուածըն պարծէին:
Եւ զի թէ Տէր չպահէ զնոսին
Ի ընդունայն պահ անդ սոքին:
Զի ահա ոչ ընդդէմ կային
Որք յամրապոյն դղեակքն էին,
Եւ փութալիքըն կարծէին,
Եւ ամրութիւն ապաստանին·
Այն որ Սեհունն էր անուանին,
Նոյն և Կարմիրն անվանելին:
գրերն, որ ի Ձորոյգետոյ ի վերայ մեր կուտեալ զգրպարտութեան կոյտս, անտես արարաք, և ողորմեցաք նոցին անհանճարութեանն. որք ոչ թէ ի հոգևոր և յանտր գիտութենէ հեռի էին, և անկար համեմատել զհոգևորս ընդ հոգևորս, այլ և ի մարմնական իմաստութենէն բաժան ցուցանէ զնոսին նոցին գրերն. տխմարք և անկարգք, և յիմար բանից շաղակրատողք, որ և բուն ռամկաքն կարող են յայս երկրաքարշութիւնս զնոսին ճանաչել. և մեք տարաք զշատախօսութիւնն նոցա իբրև զայր երկայնամիտ, և բազմապատիկ խորհրդովք. որք ոչ ունէաք ընդ նոսին հարց և փորձ և ոչ ծանօթութիւն, և յանդուգն բերանոցն նախատեցաք, զուարճացեալ յայն մասն երանութեան որ ասէ. երանի է ձեզ, յորժամ նախատիցեն զձեզ և ասիցեն բան չար զձէնջ սուտ վասն իմ. ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս։

Իսկ յետ այսր չեմք՝ և ոչ զձեր աստուածպաշտութիւնդ ձանձրացուցեալ, և ոչ մերոյ ճշմարտութեանս՝ որում տեղեակ էք ես յայտարարութեամբ, վրէժխնդրութիւն պահանջեալ յաստուածազօր կարողութենէդ. նախ՝ զի բազմահոգս էք, և երկրորդ՝ զի մեք առ բամբասողսն ախորժեմք՝ ըստ Քրիստոսի անյիշաչար լինել. երրորդ՝ զի կարճամիտ էք զլոց բանի ունկնդրութենէ, որով մեր ճշմարտութիւնս փայլէ։ Քանզի այլ անգամ եդև այս հարկս, և խնդրեցիք ի մէնջ բան՝ որ առ մեզ ուղղութեանս վկայ, տուաք զլոյց սրբոց

---

n'avons accordé aucune attention aux libelles désordonnés qui, partis [du couvent] de Tzoro'ked[1], accumulèrent contre nous des pyramides de calomnies, et nous avons pris en pitié l'ignorance de leurs auteurs. En effet, ils sont non-seulement étrangers à toute science spirituelle et relevée, inhabiles à mettre en rapport les choses spirituelles les unes avec les autres, mais encore ils se sont montrés, dans leurs écrits, éloignés de toute sagesse corporelle, ignares, absurdes, bavards insensés, à tel point que les plus grands ignorants peuvent les reconnaître aux vils penchants qui les entraînent. Nous avons supporté leurs bavardages en homme plein de longanimité et avec différentes pensées. Nous qui n'étions point en contact avec eux, qui ne les connaissions même pas, nous avons été injurié par des bouches sans frein, et nous avons été joyeux de mériter l'application de cette béatitude : « Heureux lorsque l'on vous outragera, lorsque l'on dira « de vous faussement du mal à cause de moi; réjouissez-vous et soyez dans l'allé- « gresse, car votre récompense sera grande dans le ciel[2]. »

Malgré ce qui s'était passé, nous n'avons pas cru devoir fatiguer votre zèle pieux, et implorer votre puissance soutenue par Dieu, pour venger la vérité que nous professons, ainsi que vous le savez par notre exposition; d'abord à cause des affaires multipliées dont vous êtes surchargé; en second lieu parce que nous-même nous nous réjouissons d'être en butte aux calomnies, et d'avoir l'occasion de pardonner comme le Christ; et enfin parce que la patience vous manque pour écouter des discours qui mettent en évidence la rectitude de notre foi. En effet, un pareil devoir fut exigé de nous dans une autre circonstance; vous nous demandâtes une déclaration prouvant notre orthodoxie, et nous vous la présentâmes appuyée

[1] Dans le district de Schirag, appelé aussi Tzoro'ked, province d'Ararad et dans le voisinage de la ville d'Ani. (Cf. Indjidji, *Arménie ancienne*, p. 416.) Le couvent de Tzoro'ked était sous la juridiction immédiate de l'archevêque d'Ani, le catholicos intrus Basile, l'un des principaux adversaires et ennemis de saint Nersès. Les *Tzoro'kedatsis*, Ձորոյգետացիք, sont les moines de ce couvent ou les docteurs de ce district de la Grande Arménie, qui, à l'instigation de Basile et coalisés avec les moines de Hagh'pad, Հաղբատեցիք, avaient pris parti contre l'archevêque de Tarse et l'avaient dénoncé au roi Léon.

[2] S. Matthieu, V, xi.

վկայութեամբ, որ զամենայն հակառակորդս ի հաւանութիւն նուաճէր ի միաբան զուգու-թիւնն. և ծանր եղև ձեզ ընթեռնուլն, կամ այլոց զնոյն ցուցանել, որպէս և ունիք հարկ յԱստուծոյ՝ ոչ վայրապար ածեալ սուսեր ընդ մէջ, այլ ի վրէժխնդրութիւն այնոցիկ, որ չարն գործիցեն։ Նորա տեսաք զձեզ առ այն քննութիւնն և վրէժխնդրութիւնն տա-տամ, ունիմք զլուծ խոնարհութեան, և նստիմք լռութեամբ ի տան։ Չեմք մտեալ և ել ի ձեր արքունական ապարանս, և ոչ ի յոյզ և ի խնդիր հոգևոր ողորմութեանց, կամ մար-մնական հացից։ Ոչ պարծիմք ձեր տոհմակցութեամբն, և ոչ մեր հայրենի պայազատու-թեամբն, ոչ գրով և ոչ բանիւ, և ոչ քան զչափ մեր պատուոյս ձգտեցաք, և ոչ ի վերայ ուրուք պատուոյ յարձակեցաք, ոչ ձիօք և ոչ ջորեօք յօրացաք, և ոչ զքահանայութիւնս երկրորդ մարմնոյ աշխատութիւն արարաք. ոչ ի քաղաքս ձեր ձեռներէց եղաք, և ոչ զզոր-ծակալս ձեր հարստահարեցաք. զրկեցաք ի նոցանէ, և տարաք. զզուեցաք, և համբե-րեցաք, և ունկան ձեր ձանձրութիւն ոչ արարաք։ Կատարեալ իմաստութեամբս զոր ունիմք յԱստուծոյ, առաջի ձեր իբրև զտխմար մանուկ եմք երևեալ, թեթևութեամբ ոգւոյ և բանի՝ և զտաղանդս զոր ունիմ առ իս՝ ծրարեալ կայ և թաքուցեալ, խրատեալ ի մարգարէէն, որ ասէ. ատեցին ի դրունս զյանդիմանիչս, և զբանս սուրբս պիղծս արարին. վասն այսորիկ որ իմաստունն է՝ ի ժամանակին յայնմիկ լռեսցէ, զի ժամանակն չար է։ Այս լռութեամբս կամ դադարեալ, և առ Աստուած խօսակցութեամբ պարապեալ. որոյ կամ առաջի մտաւոր հառաչմամբ, և անմռունչ հեծութեամբ, և միշտ արտասուաց հոս-մամբ, ոչ դիտելով զերևելիսն, այլ զաներևոյթսն, և զվերինն խնդրեմ, ուր Քրիստոսն նստի ընդ աջմէ Աստուծոյ և անդ լնուլ զաղօթս իւր առ իս մաղթեմ, որ ասաց. Հայր կամիմ,

---

des témoignages de l'Écriture sainte, et suffisante pour contraindre nos adversaires à se concilier avec nous dans l'amour de la vérité. Ce fut une fatigue pour vous de la lire et de la montrer à d'autres, quoique Dieu vous en ait fait une obligation, vous à qui il a mis l'épée au côté, non point inutilement, mais pour châtier les méchants. Témoin de votre lenteur à vous livrer à cet examen et à faire justice, nous avons accepté le joug de l'humilité, et nous nous tenons renfermé dans notre maison en gardant le silence. Nous ne fréquentons point votre palais souverain pour obtenir des grâces spirituelles ou pour quêter des faveurs temporelles. Nous ne nous enorgueillissons pas de notre parenté avec vous, et de l'illustration de notre famille, ni par écrit, ni en paroles. Nous ne nous sommes point élevé au-dessus de notre position, nous n'avons empiété sur les fonctions de qui que ce soit; nous n'avons point étalé un luxe de chevaux et de mulets, et considéré le sacerdoce comme une occupation mondaine et secondaire; nous n'avons rien entrepris contre les villes de votre royaume, ni opprimé leurs gouverneurs. Dépouillé par eux, nous nous sommes résigné; vexé par eux, nous avons enduré leurs injustices avec patience, sans fatiguer jamais vos oreilles de nos plaintes. Malgré la sagesse accomplie que nous tenons de Dieu, nous avons été à vos yeux comme un enfant encore ignorant, léger d'esprit et de langage; et le talent que je possède en moi reste enveloppé et caché, d'après la parole du Prophète : «A la cour, on hait les censeurs, et les saints discours ont été profanés. «C'est pourquoi le sage sera muet dans ce temps-ci, qui est un temps mauvais.» Aussi je vis dans le silence, uniquement occupé à m'entretenir avec Dieu, prosterné devant lui avec un cœur endolori, des soupirs muets et des larmes intarissables, insensible aux choses de ce monde pour ne songer qu'à ce qui est immatériel, ne demandant au Christ qui est assis dans le ciel, à la droite de son Père, que l'accomplissement pour moi de sa prière : «Père, je désire que là où je suis,

զի ուր եմ ես, և նոքա ընդ իս լինիցին. զի տեսանիցեն զփառս իմ, զոր ետուր ցիս : Յայն փառացն և տանն վայելչութեան տարփանօքն զբաղեալ իմ աղքատութիւնս, թեթև ունիմ զՁորոյգետոյ եղբարցն և վարժապետացն անարգանսն և զձեր փառսն : Այս ես լուսաւորեալ ի վայելչութիւնն՝ հեղում զարտասուս առաջի Աստուծոյ Հօր՝ միջնորդաւն Յիսուսի Քրիստոսի, և զձեզ ի նոյն տեսութիւնս լուսաւորել, և այսու գիտութեամբս՝ երևելեացս արհամարհողս առնել :

Այս մինչ ես յայս ընթացս և ի զբաղմունս կամ գեգերեալ, զելանելն և ընդ Քրիստոսի լինելն լաւ համարելով, և զկեալն ի մարմնի ոչ կարևոր, որովհետև ոչ եմ յօգուտ ձեր, եկն իշխողդ մեր Հեթում, և եբեր առ իս ի ձէնջ պատուէր հրամանի՝ որպէս առ տհաս մանուկ. և յայս համառօտեցան բանքն, թէ անկարգ է իմ ընթացքս և անօգուտ, և չէ ընդ շաւիղս երանեալ հարց մերոց Գրիգորիսի Վկայասիրի, և նորին համանուանն՝ որ յԵգիպտոս, և որ զկնի նորին աստ հայրապետ Գրիգորիոս և նորին եղբայրն Ներսէս. և ես սոտրիւրեալ գնամ ի նոցա շաւղաց, և դուք և այլ Հայք նոյին ընթացակիցք : Եթէ ոչ էր յայս, արժանի էր հայրապետութեան և պատուոյ. սակայն այս վերջացուցանէ զիս

« ceux-ci soient avec moi, afin qu'ils contemplent la gloire que tu m'as donnée[1]. » Emporté par le désir d'associer mon humilité à cette gloire et d'habiter ce séjour de bonheur, je fais bien peu de cas des outrages des frères et des professeurs de Tzoro'ked, et aussi de votre magnificence. Éclairé par un avant-goût de ces délices, je verse des larmes en présence de Dieu le Père, en prenant pour intercesseur Jésus-Christ, le suppliant de vous éclairer dans la même perspective, et, par cette révélation, vous inspirer le mépris des choses terrestres.

Tandis que j'étais dans ces dispositions et ces préoccupations, regardant comme un bien pour moi de quitter cette vie et d'aller rejoindre le Christ, et considérant comme vaine cette existence corporelle, puisque je ne vous suis d'aucune utilité, arriva notre prince Héthoum[2], qui m'apporta un ordre émané de vous et conçu comme s'il était adressé à un enfant sans expérience. Ce qu'il me dit peut se résumer en ceci : que ma conduite est déraisonnable, absurde, et s'écarte de la voie tracée par nos saints Pères Grégoire Vgaïacêr [autrement appelé Vahram] et son homonyme qui résida en Égypte[3], et par les patriarches leurs successeurs dans ce pays-ci[4], Grégoire [Bahlavouni] et son frère Nersès [Schnorhali]; que je m'égare loin des sentiers de ces saints docteurs, tandis que vous et les autres Arméniens vous les suivez fidèlement. Il ajouta que sans cela j'aurais été jugé digne du suprême pontificat et des honneurs attachés à cette dignité ; mais que ma manière d'agir m'en éloigne, en me rejetant au dernier rang; de plus, que ce n'est pas sen-

[1] S. Jean, XVII, xxiv.

[2] Héthoum II, prince de Lampron, grand chambellan d'Arménie et frère de saint Nersès, avait épousé la cousine germaine de Léon II, la fille de Thoros II, oncle de ce dernier.

(Voir le premier tableau généalogique de la dynastie des Roupéniens, et celui des princes héthoumiens de Lampron.)

[3] Cet homonyme était, suivant l'historien Vartan, le fils du frère du patriarche Grégoire Vgaïacêr; suivant saint Nersès Schnorhali (*Histoire rimée d'Arménie*), le fils de sa sœur. Grégoire, après avoir séjourné un an environ en Égypte, en 1076, lui confia en partant la direction spirituelle de ses compatriotes dans ce pays, avec le titre d'*Ar'adchnort*, առաջնորդ, *ancien* ou *premier*. Ce titre est celui que porte encore le chef religieux des Arméniens d'Égypte; il réside au Kaire. Les évêchés arméniens, aujourd'hui dépourvus de titulaire, *in partibus infidelium*, sont administrés par un vartabed ou docteur qualifié d'ar'adchnort.

[4] C'est-à-dire dans la Petite Arménie. En effet, le patriarche Grégoire Bahlavouni vint établir sa résidence dans la forteresse de Hr'om-gla, située sur l'Euphrate, dans le voisinage de la Cilicie, et où ses successeurs habitèrent jusqu'en 1293 (cf. ci-dessus, p. 542-543).

ի պատուհասմանէն պատուոյ. և ոչ միայն զիս, այլ և ձեզ լինիմ պատճառ նախատանաց ի Ձորոյգետացեացն. որք և անէծս վայրապար խօսին ի գլուխս իւրեանց, և դուք աղաչեցէք զմեզ վասն նոցա գայթակղութիւնն չինելոյ՝ դառնալ ի մոլորմանէս. ապա թէ ոչ՝ զրկիլ ի պատուոյն, զոր մինչև ցայժմ ի ձէնջ էաք ընկալեալ։ Արդ ես ի վերայ այսպիսի հրամանի ձեր՝ գոհանամ զԱստուծոյ անխառով կամօք, որ արժանի առնէ զիս վասն իւր ճշմարտութեանն վկայութեան յանարգութիւն կոչիլ. թէ լինիմ արժանի և գործով ի նոյն վայելել։

Շնորհ ունիմ պարգևողին, որ տայ ինձ ոչ միայն զ'ի նա հաւատալն, այլ և վասն նորին նախատիլ և չարչարիլ. և պատրաստ եմ զանարգութիւնս յայսմ հետէ ընդունել ի ձէնջ՝ քան զոր մինչև յայս՝ զպատիւ։ Եթէ իրաւացուցանէ քո արքունական ատեանդ առանց քննելոյ և դատելոյ ձգել զիս յանպատուութիւն, ընդգրկեմ զնոյն որպէս զՔրիստոսի աթոռակցութիւն։ Իսկ ապա եթէ զքննելն իրաւացի համարիք, և ոչ յայդմանէ հրաժարեմ. այլ պատրաստ եմ ի պատասխանատուութիւն և Ձորոյգետոյ բնակչացն և մերոյ աշխարհիս և ամենայն հակառակորդի, որ չեմ մոլորեալ և ոչ ատերիւրեալ ի սուրբ եկեղեցւոյ ուղիղ շաւղացն, ոչ ըստ հաւատոյ և ոչ ըստ բարեկարգութեան։ Ի վերայ այսր և ուղղութեամբս չեմ իւրեանց մոլար ընթացիցն լեալ դատախազ, որպէս զարդարև զճշմարտութեան ուսուցիչ. այլ ընդունեալ եմ զինքեանս իւրեանց անկարգութեամբն ի բարեկարգութեանս հաղորդս իբրև զեղբարս. և աղօթեալ միշտ ի վերայ նոցին, որպէս ունկնդիրն աղօթից Աստուած վկայէ։

Իսկ այժմ զի կոչէք զիս առաջի դատել, պատրաստ եմ ի պատասխանել։ Ո՞յք են ոսոխքն, եկեսցեն յանդիման լիցին. ասասցեն և լուիցեն։ Ապա թէ առանց քննելոյ

---

lement sur moi, mais sur vous aussi, que j'attire les injures de ceux de Tzoro'ked, de ces gens dont les vaines malédictions retomberont sur leur tête; que, pour mettre un terme au scandale qu'ils prétendent éprouver, vous me priez de revenir de mon erreur, ou sinon que je serai dépouillé des honneurs que j'ai reçus de vous jusqu'ici. En recevant de tels ordres de votre part, j'offre des actions de grâces à Dieu avec une volonté inébranlable qui me rendra digne de subir des humiliations pour le témoignage que je rends à sa véritable doctrine, si je suis par le fait digne de cet avantage.

Je remercie celui qui veut bien m'accorder non-seulement la foi en lui, mais encore la faveur d'être avili et de souffrir à cause de lui. Me voici prêt à recevoir de vous plus de mépris que je n'ai encore obtenu d'honneurs. Si votre conseil de cour[1] croit devoir me destituer sans examen et sans jugement, j'accepte avec joie cette décision, comme me rendant participant du trône de Jésus-Christ; que si vous pensez devoir procéder à un examen, je ne m'y refuse pas. Je suis disposé à répondre même aux gens de Tzoro'ked, comme à ceux de mon pays, et à tout contradicteur, et à prouver que je ne suis point dévoyé et en dehors des doctrines de la sainte Église, ni pour le dogme, ni pour la discipline. Bien plus, dans mon orthodoxie, je ne condamne point leurs erreurs comme si j'enseignais moi-même réellement la vérité, et je les ai reçus, quoique égarés, dans la communion des fidèles, comme des frères. Sans cesse je prie pour eux, comme Dieu m'en est témoin, lui qui exauce les supplications qu'on lui adresse.

Maintenant, si vous m'appelez en jugement, je suis prêt à comparaître. Quels sont mes adversaires? Qu'ils se présentent, qu'ils prennent la parole et qu'ensuite

[1] C'est la *curia regis*, la *roial aute cort* des chartes latines et françaises, qui était composée des barons de la Cilicie, et qui avait été organisée par Léon II sur le modèle des cours des barons importé par les croisés en Orient.

փոքրկացուցանէք զիմ բարեկարգութիւնս, և իբր զանօգուտ իրս տայք արհամարհել զուղիղն, և զճշմարիտն իբր զանպիտան, և զմեծն որպէս զփոքր, և զճշմարիտն որպէս զսուտ, ոչ հաւանիմ, և ի վերայ սորին ճշմարտութեան նախատիմ և մեռանիմ․ քանզի կայ Քրիստոս և ասէ առ իւր ծառայս․ որ ոք լուծցէ մի ինչ ի պատուիրանացս յայսցանէ ի փոքունց, և ուսուսցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեանն երկնից․ և անդ մեծ լինել ցանկամ և ոչ փոքր։

Այլ նորին առաքեալքն պատասխանել ուսուցին այժմու խուժանիս, որպէս նոքին հրէիցն, թէ՝ հնազանդել պարտ է Աստուծոյ առաւել քան մարդկան։ Այլ Պօղոս ասէ համարձակ․ եթէ մարդկան հաճոյ լինէի, ապա Քրիստոսի ծառայ ոչ էի։ Այլ սորդ էկ բարեպաշտ իշխող և զմեծութիւն և զփոքրկութիւն իրիս քննեսցուք, զոր ասես արհամարհել ի պէտս հաճոյից մարդկան․ թէ մե՞րս փոքր է, թէ այն՝ վասն որոյ Քրիստոսն մեռաւ, և Յովհաննէս գլխատեցաւ, և միւս Յովհաննէս աքսորեցաւ, և Յուսիկն բրածեծ ջարդեցաւ, և Ներսէս դեղատուութեամբ նահատակեցաւ։

Օրէնք եդ Աստուած շաբաթանալ ոչ յամենայնիրս, այլ ի ծանր գործոցն շաբաթանալ և հանգչել։ Հրէայքն առաւել սիրէին զդատարկութիւնն, և զՔրիստոս վասն բժշկելոյն ի շաբաթնի՝ օրինազանց ասէին․ և նա զի գիտէր թէ ոչ է աստուածադիր օրէնքս այս, բժշկէր ի շաբաթսն․ և ոչ հաւանեցաւ զկամս նոցին, և յայլ օր փոխեաց․ այլ զճշմարտութիւնն

---

ils écoutent. Mais si, sans discussion, vous avilissez la bonne doctrine que je professe, si vous livrez au mépris comme vain un sentiment droit, et comme inutile la vérité, ce qui est grand comme quelque chose de mesquin, vous n'aurez pas mon adhésion. Pour cette même vérité je souffrirai les outrages et la mort; car voici le Christ qui dit à ses disciples : « Quiconque violera l'un de ces moindres « commandements, et apprendra aux hommes à les violer, sera regardé dans le « royaume des cieux comme le dernier [1]. » Moi, je désire être grand dans ce séjour, et non petit.

Ses apôtres nous ont appris à répondre à cette tourbe, comme eux-mêmes répondirent aux Juifs : « Il faut obéir plutôt à Dieu qu'aux hommes [2]. » Et saint Paul dit explicitement : « Si j'étais agréable aux hommes, je ne serais pas le serviteur « de Dieu [3]. » Considérons si cette question est importante ou futile, cette question dont tu prétends qu'il faut tenir peu de compte pour complaire aux hommes. Est-ce donc une cause à traiter aussi légèrement que la mienne, la même pour laquelle le Christ souffrit la Passion, saint Jean [Baptiste] fut décapité, saint Jean [l'Évangéliste] banni, saint Hésyche expira sous les coups de bâton, et saint Nersès par le poison [4]?

Dieu a établi comme loi d'observer le sabbat, non point d'une manière générale, mais dans les choses considérables, et de prendre du repos. Les Juifs préféraient rester oisifs, et soutenaient que le Christ avait violé le sabbat en guérissant ce jour-là les malades. Cependant, lui qui savait que le précepte absolu n'est pas d'institution divine, il opérait ce jour-là même des guérisons. Mais n'ayant pu persuader les Juifs, il changea de jour. Il honorait la vérité, et fut crucifié par eux,

[1] S. Matthieu, V, XIX.

[2] Actes des apôtres, V, XXIX.

[3] *Épître aux Galates*, I, X.

[4] Le roi arsacide d'Arménie, Diran II (325-341 de J. C.), fatigué de la liberté avec laquelle le patriarche Hésyche (Oucig) le reprenait de ses désordres, le fit périr à coups de fouet et de bâton. (Moïse de Khoren, III, XIV.) Les mêmes causes amenèrent aussi la mort de saint Nersès le Grand. Comme ce patriarche reprochait vivement au roi Bab, petit-fils de Diran (370-377), une honteuse passion, celui-ci, qui n'osait se défaire de Nersès ouvertement, par crainte de l'empereur Théodose le Grand, l'empoisonna. (*Ibid.* XXXVIII.)

պատուեաց, և այս պատճառաւս ի նոցանէ խաչեցաւ, թէ զշաբաթս ոչ պահեաց։ Ընդ ընդէ՞ր ոչ զերծոյց զնոսա յաստուածասպանութենէն, և փոխեաց զբժշկութիւնն յայլ օր, բայց զի չէր օրէնք՝ զօրէնքն յիւր չափին պահեաց, և զաւելին խափանեաց։ Իսկ ես ունելով զՔրիստոս վասն իմ ըստ օրէ առաջի Աստուծոյ Հօր պատարագ, խափանե՞մ զնորա սպասաւորելն քահանայական սուրբ զգեստիւք և բացա գլխով և պաշտօնէից սպասաւորութեամբ, զոր հրամայեաց Աստուած Մովսեսիւն զզգեստուցն կարգ, և Պօղոս զբանալ գլխոյն, և սուրբ հարքն զպաշտօնէիցն դաս. և հագնիմ գիշտ որպէս Հաղբատայ եպիսկոպոսն, և երկու թիզ կնկուղ վրացի սաքուլայով, և պատարագեմ հաղբատեցի սև փիլոնով, և փակեմ զդուռն ի վերայս, և ձգեմ զվարագոյրն, և անհաղորդ առնեմ զժողովուրդն յիւրեանց Աստուծոյն քաւիչ մահուանէն. զինչ կուառնեն ամենայն վանորայքդ ի վերն և ի վայրս, և չեն պատկառեր ի նոյն ինքն ի պատարագի խորհրդոյն, որ երբեմն ասէ. թէ՝ ընդ սերովբէսն համաձայնեսջի՛ք. երբեմն թէ՝ տուր մեզ համարձակաձայն բարբառով կարդալ զքեզ, Հայր. երբեմն թէ՝ դպիրք սաղմոս ասացէ՛ք ձայնիւ քաղցրութեամբ, և զՏէր յերկինս օրհնեցէ՛ք։ Հրամայէ՛ և տե՛ս զքո վանորայքդ, թէ կատարե՞ն այս օրէնքս

---

sous prétexte qu'il n'avait pas observé le sabbat. Pourquoi ne les retint-il pas de commettre un déicide, et changea-t-il de jour pour rendre la santé aux malades? Quoique ce ne fût pas une loi, il l'observa cependant dans la mesure qui lui convenait, en supprimant ce qui était surérogatoire. Moi qui chaque jour offre le Christ en sacrifice à Dieu le Père, est-ce que j'empêche que son service ne se fasse avec les vêtements sacerdotaux, la tête nue, par des ministres sacrés, puisque Dieu a prescrit, par la bouche de Moïse, la forme de ces vêtements, et saint Paul d'avoir la tête découverte, et puisque les saints Pères ont fondé la hiérarchie ecclésiastique? Est-ce que je revêts la pelisse comme l'évêque de Hagh'pad, le capuchon long de deux empans avec la sak'oula[1] géorgienne, et célèbre la messe avec le manteau (ph'ilon) noir de Hagh'pad[2], en fermant la porte sur moi? Est-ce que j'étends le rideau[3], et prive le peuple de la participation à la mort expiatoire de son Dieu, comme cela se pratique dans tous les monastères des parties supérieure et inférieure de l'Arménie, où le Mystère même n'est l'objet d'aucun respect[4]? Et cependant la liturgie dit : « Chantez de concert avec les Séraphins; » ailleurs : « Accorde-moi de te proclamer d'une voix haute, ô Père! » ailleurs encore : « Clercs, « psalmodiez d'une voix douce, et bénissez le Seigneur dans les cieux[5]. » Vois

[1] Le mot arménien սաքուլա est le latin *sacculus* ou *cucullus*, le capuchon de la robe monastique.

[2] C'est l'ancien manteau grec φελόνιον, φαινόλης, en latin *phenula* ou *penula*. Ce mot se retrouve sous la forme *pilone*, dans un état des sommes réclamées au nom du roi d'Arménie aux Vénitiens, pour dommages occasionnés par eux dans le pillage du château de Lajazzo. (*Apud* M. de Mas Latrie, *Hist. de Chypre*, t. II, Documents, p. 684.)

Les prêtres arméniens qui assistent à l'office dans le chœur, revêtent le *ph'ilon*, qui est d'étoffe couleur violette foncée, pour les vartabeds ou docteurs.

[3] C'est le rideau վարագոյր qui, dans les églises arméniennes, sépare le sanctuaire de la nef, et qui se ferme et s'ouvre alternativement pendant les différentes phases de la liturgie. Il remplace l'iconostase de l'église byzantine conservé aujourd'hui dans l'église grecque et gréco-russe.

[4] L'auteur fait allusion à la décadence dans laquelle était tombée la célébration des cérémonies du culte dans la Grande Arménie. Au milieu des invasions et des ravages continuels des infidèles, et depuis qu'ils tenaient ce pays sous leur domination, l'habitude avait prévalu, parmi le clergé séculier et régulier, de faire l'office divin sans ornements sacerdotaux, dans le costume le plus négligé et avec les portes de l'église fermées, et de ne reconnaître ni les lois de la discipline, ni les liens de la hiérarchie. Saint Nersès de Lampron, à l'exemple des Latins, s'efforça de donner au culte le plus de pompe possible, et d'introduire dans les couvents arméniens la communauté de vie et de propriétés, et autres institutions ou réformes qu'il énumère.

[5] Cf. la liturgie arménienne, traduite dans mon ouvrage intitulé : *Histoire, dogmes, traditions et li-*

ի մէջ իւրեանց ։ Արդ ինձ հրամայես յօրինացս՝ որպէս յանօրէնութենէ հրաժարել, և զնոսա առանց դատելոյ թողուս յանօրէնութեանն անշարժ մնալ, որ լեզուագարք են, և անդուստ բերանք, և քան զո՛վ ճարտարք ։ Նոքա սաստութեամբն կարեն զքո պարզամտութիւնդ երկեցուցանել ․ և ես ճշմարտութեամբս ոչ թէ կամէի այս իմ գլխաւորիս քարշանել, որ զՔրիստոսի պատարագն բարեզգեստութեամբս հրապարակաւ առնեմ, որ է ամենեցուն փրկանք, և զիւր պատարագին խրատատուութիւնսն ի տեղի լնում, և զայս ես որպէս զչինչն իրս չարհամարհեմ, և ոչ յայս շաւղացս խոտորիմ․ այլ յօժարութեամբ առնում վասն Քրիստոսի պատարագին բարեվայելչութեան զմահն, որպէս նա վասն ի շաբաթու բժշկութեանն ։

Երկրորդ անկարգութիւն իմ այն է, որ ընդ ամենայն քրիստոնեայս հաղորդիմ ։ Գիտելի է իմաստուն քննողաց՝ որ քրիստոնէից ազգք բացատրին ի միմեանց իւիք ։ Իսկ շնորհն Աստուծոյ զօրացոյց զիս՝ զայս մտօք աւանդութիւնս նոցա գիտութեամբ արհամարհել, և զսէրն նախապատուել ․ և է ինձ Հայն որպէս զԼատինացին, և Լատինացին որպէս զՀելլենացին, և Հելլենացին որպէս զԵգիպտացին, և Եգիպտացին որպէս զԱսորին ։ Արդ եթէ ես միոյ ազգի ջատագով լինէի, ընդ այլսն ո՞րպէս էի կար հաղորդիլ․ բայց ընդ իւրաքանչիւրսն որ միմեանց թշնամիք են՝ խառնիմ, և զնոսա շահիմ ըստ Քրիստոսի առաքելոյն․ և ունիմ բան՝ որ ամենայն հարցողի կարող եմ պատասխանել թէ ուղիղ ընթանամ։

---

comme dans tes monastères ces règles sont observées. Tandis que tu m'ordonnes de quitter, en vertu de notre loi, ce que tu en considères comme la transgression, tu laisses les autres vivre imperturbables dans la prévarication, sans les juger, eux qui sont des bavards à la langue indomptable. Y en a-t-il de plus habiles qu'eux? Non certes, puisqu'ils parviennent à intimider votre esprit simple; et moi, je ne voudrais pas même me servir de la vérité qui est mon partage pour influencer mon supérieur, moi qui, avec des vêtements convenables, célèbre publiquement le saint sacrifice, établi pour le salut de tous, et qui accomplis les instructions qui s'y trouvent contenues. Je ne méprise pas ces cérémonies comme des riens, et je ne m'écarterai pas de la règle que je me suis tracée; mais j'accepterai avec empressement, pour la splendeur du saint sacrifice, la mort, comme le Christ la subit pour ses guérisons opérées le jour du sabbat.

La seconde irrégularité que l'on me reproche est que je suis en communion avec tous les chrétiens. Il doit être évident, à quiconque réfléchit, que les nations chrétiennes diffèrent l'une de l'autre en quelques points. Mais la grâce de Dieu m'a inspiré la force de me mettre par la science au-dessus de leurs vaines traditions[1], et d'attacher seulement du prix à une charité réciproque. A mes yeux, l'Arménien est comme le Latin, le Latin comme le Grec, le Grec comme l'Égyptien, et l'Égyptien comme le Syrien. Si maintenant je me déclarais le partisan d'une seule nation, pourrais-je être en communion avec les autres? Non, certainement; je me mêle donc dans les rangs de ceux qui sont ennemis, et je les gagne tous, suivant le précepte de l'Apôtre : « J'ai de quoi répondre à celui qui m'interroge, en « lui disant que je suis dans le droit chemin. » Par la grâce du Christ, je détruis

turgie de l'Église arménienne orientale. Paris, 1859, in-18, 3e édition, p. 107-174.

[1] Le mot *traditions* signifie ici les observances particulières, surérogatoires, d'institution humaine et disciplinaire, et non divine; saint Nersès de Lampron suit la pensée de Notre-Seigneur Jésus-Christ (S. Marc, VII, 1-XIII), reprochant aux Pharisiens de pratiquer avec un scrupule exagéré les rites transmis par leurs ancêtres et de négliger la loi de Dieu.

և սիրովն Քրիստոսի զամենայն կրձիմս քակեմ, որով բարեհռչակիմ և ի Լատինացւոց եկեղեցիսն, և ի Հելլենացւոց, և յԱսորւոց, և կամ ի Հայաստանս, և ընդ սոսա անշարժ, և ի նոցին աւանդութիւնն անփոփոխ ։

Արդ եթէ չարակնէին, և զնախանձ իւրեանց առ մերձաւորս զայրացուցանէին, ընդէր ոչ մխիթարէին որ իմ հանճարս զՀայաստանս այս ազգացս հաճոյացոյց, և զնոսին միշտ առ մեզ ի սէր ձգէ · որպէս տեսանէք դուք և լսէք, որ աննախանձ ունիք զկամս ։ Բայց նախանձն ի Քրիստոսի լուսոյն նսեմացաւ, յիմոյ չէ զարմանք թէ խաւարի ։ Եւ յայս ոչ եմք օտար ի հարցն մերոց շաւղաց, այլ անստերիւր ընթացակից · զի ոչ եթէ ի Ձորոյգետ, այլ առ մեզ են սուրբ հարցն բանք՝ Գրիգորիսի վկայասիրի, և որ յԵգիպտոս նորին համանուանն, և մերոց տերանցս · ունիմք գրով զնոցին հաւատոյ զդաշն, և ունիմք ի լրոյ տեսողացն զնոցին վարուցն և զկարգացն ցոյցս · և երբ գամք յատեանն՝ կարող եմք ցուցանել, որ մեք ի նոցին շաւղացն վերայ գնամք, և ի հաւատոց և ի կարգաց, և ոչ որք զմեզ նախատեն ։ Եւ ոչ եթէ զնոսա միայն ունիմք առաջնորդս, այլ և զորս նախ քան զնոսա զսուրբսն, որովք թէ դատին զմեզ ոչ լինիմք պապանձեալս, այլ մեծաւ պանծանօք զնոսին պապանձեցուցանեմք · զի ունիմք զնոցին հաւատոյ դաշն, զսուրբ պատարագին զարդն, զաղօթից կարգ, զքահանայագործութեան փոյթ, զաստիճանաց բացատրութիւն, զկրօնաւորութեան օրհնութիւն, զնոցին միաբանութիւն, զմիշտ դատելովն ուղղելն, զաշխարհի երիցանց զխրատ, զքաղաքի եկեղեցւոյ պայծառութիւն, զտօնից վայելչութիւն,

---

toutes les barrières de séparation, et ainsi ma bonne renommée s'étend dans les églises des Latins, des Grecs, des Syriens, et dans l'Arménie, tandis que je reste inébranlable au milieu d'eux, et sans jamais incliner vers leurs traditions particulières.

S'ils avaient de la malveillance, et s'ils portaient au plus haut degré d'aigreur l'envie contre leurs voisins, ne serait-ce pas une consolation pour moi que d'avoir su habilement rendre l'Arménie agréable à ces nations, et sans cesse nous attirer leur amitié, comme vous en avez été le témoin par vous-même ou comme vous l'avez entendu dire, vous dont le cœur est rempli de bienveillance? Si l'envie a été obscurcie par la lumière du Christ, il n'est pas surprenant qu'elle l'ait été aussi par la mienne; et en cela nous ne sommes pas éloigné de la doctrine de nos saints Pères; au contraire, nous la suivons sans nous tromper. Car ce n'est pas avec ceux de Tzoro'ked, mais avec nous, que s'accordent dans leurs enseignements nos saints docteurs, Grégoire Vgaïacêr, et son homonyme, qui résidait en Égypte, et nos autres prélats. Nous possédons par écrit leur profession de foi, et d'après le rapport de témoins oculaires, l'exemple de leur vie, ainsi que la connaissance des institutions qu'ils avaient adoptées. Lorsque nous comparaîtrons devant le tribunal de Dieu, nous pourrons prouver que nous marchons sur leurs traces, pour la foi et la discipline, et que ce sont nos accusateurs qui s'en écartent. Ce ne sont pas seulement ces pontifes qui sont nos guides, mais aussi leurs saints prédécesseurs. Soutenus par eux, si nous sommes mis en jugement, nous ne resterons pas muet; au contraire, nous réduirons victorieusement nos adversaires au silence, car nous possédons la profession de foi de ces saints docteurs, nous tenons d'eux la forme de la sainte liturgie, l'ordre des prières, la sollicitude pour la célébration des divins mystères, la distinction des degrés de la hiérarchie, la bénédiction qui consacre les moines, leur communauté de vie, le soin continuel d'imprimer à tous, par des remontrances, une bonne direction, la surveillance des prêtres

զանձին խղճմտութեան զատ, զօր ըստ օրէ սխալմանց խոստովանութիւն, զերկնային լուսոյն հայեցողութիւնն, զառ ի նոյն սաստկանալն երևելեաց արհամարհութիւն, զայսու ըղձմամբ արտասուաց առուս, յորմէ սոքա՝ որ զմեզ դատեն՝ ի յոլովից կամ ի բնաւից թերիք գտանին ։

Եւ չեմ ես յիմարեալ որ լռեմ, այլ նոքա որ շաղակրատեն զոր ոչն գիտեն ․ զի Քրիստոս հրամայեաց թէ՝ ծառն ի պտղոյն ճանաչի ․ մեր պտուղն այս է ի մեծատոհմութիւնս, և ի ձեր պատիւն և ի հայրենի ժառանգութիւնս ․ և զԱնեցւոյն պտուղն դուք էք լսեր, և զԾորոյգետոյն, և որ անդ Տուտէորդին և Քոբայրեցին, և այլքն խրեանց աշտողքն ․ զի Տուտէորդին յանարգութենէ յառաջ եկեալ լեզուագարելովն՝ փառս որսայ առ ի մարդկանէ, և զփառս Աստուծոյ ոչ գիտէ ․ ուտելով և ըմպելով ընդ աշխարհականաց զորովայն պարարէ, և զեկեղեցւոյ դուռն թէ ընդ ո՛ր է՝ բնաւ չգիտէ ․ որ առ մեզ ձգտի յուսուցանել, և զԹուրքն եղբայրն իւր կամի, և կամ թէ ոչ զօրէ աշակերտել, և ոչ իւրում տանն բարւոք վերակացու գիտէ լինել, որ յեկեղեցւոյ սրբոյ աստիճան անձամբ զանձն ընծայէ, և յառաջին բարձին ինքնահաճութեամբ բազմի ։ Իսկ Հաղբատացիք վարժքն՝ այնքան կուրացեալք ի միմեանց նախանձուէ, մինչ զի ի բան խօսելն միոյն և միւսոյն ունչ առնելն՝ ամենայն վանականացն կատականք են և ծաղր ։ Զսեամս տաճարին Տեառն ոչ կոխեն երբեք զանարժանս, և զմեր սպասաւորելս առանց ճանաչելոյ երգիծանեն ։ Այլ ոչ կամեցաք ոչ խօսակից լինել գրով, և ո՛չ ընդունելութիւն ունել բանիւ ․ և ոչ նոցին կայր

---

séculiers, le zèle pour la décoration des églises urbaines et pour la célébration des fêtes, l'examen de conscience fait avec remords, la confession quotidienne de nos péchés, la contemplation de la céleste patrie, et, par une suite du désir qui nous entraîne vers elle, le mépris des grandeurs terrestres, et les torrents de larmes que ce désir fait couler, choses qui toutes ou presque toutes manquent à ceux qui nous condamnent.

Je ne suis pas insensé parce que je me tais; cette épithète convient bien mieux à ceux qui bavardent sur le compte d'un homme qu'ils ne connaissent pas. Le Christ a dit, « Un arbre est connu par son fruit[1]; » notre fruit à nous, c'est l'illustration de notre maison, l'honneur que vous nous témoignez et notre héritage paternel. Vous savez par ouï-dire quel est le fruit que produisent [Basile] d'Ani, ceux de Tzoro'ked, Doudéorti, [David] de K'opaïr[2], qui habitent ces lieux, et leurs adhérents. Vous n'ignorez pas que Doudéorti, sorti du sein de l'abjection, cherche par ses vains propos à s'attirer la gloire des hommes, et méconnaît la gloire de Dieu; qu'il se gorge la panse en mangeant et buvant avec des séculiers, sans savoir le moins du monde où est la porte de l'église; et cependant il prétend nous enseigner, lui qui regarde le Turk comme son frère, lui qui n'a pas le courage de former des disciples, et ignore qu'il y a un excellent supérieur dans sa maison, lui qui s'arroge la dignité ecclésiastique dont il se pare, et de sa propre volonté s'assied au premier rang. Les érudits de Hagh'pad sont tellement aveuglés par leur haine mutuelle, que lorsque l'un parle, l'autre se moque de lui; conduite qui excite les railleries et les rires de tous les religieux. Eux, dont les pas indignes ne foulent jamais le seuil du temple du Seigneur, tournent en dérision notre manière d'exercer le saint ministère, sans en avoir la moindre idée. Non-seulement nous n'avons pas voulu avoir de rapports avec eux par correspondance,

[1] S. Matthieu, XII, XXXIII.

[2] Couvent du district de Daschir, province de Koukark', dans l'Arménie septentrionale. (Indjidji, *Arménie ancienne*, p. 362.)

[illegible]

[illegible]

---

mais même en conversation. Ils ne m'étaient connus ni par leurs bavardages ni par un commerce quelconque du temps de notre seigneur Grégoire [Dgh'a[1]], époque où, dans la même ligne de conduite, nous étions déjà en évidence aux yeux de tous et depuis laquelle nous avons été de plus en plus en vue, jusqu'au moment où Votre Piété nous convoqua pour la consécration du catholicos [Grégoire] Manoug. Après quoi vous nous renversâtes de notre siége, en nous appelant à comparaître en jugement. Nous déclinâmes cet appel; mais votre ordre écrit nous manda une, deux, trois, quatre et cinq fois. Nous vînmes enfin, et nous souscrivîmes à ce que vous décidâtes dans cette réunion.

Nous savions que des gens étaient morts à Hr'om-gla, et que vous aviez pris là de l'or et de l'argent. Nous n'étions pas plus faible de langue que les autres, et cependant nous nous sommes abstenu de vous donner dans cette occasion un conseil, comme certains l'ont fait. Nous avions néanmoins des droits temporels et de famille à revendiquer dans le partage de ces biens; mais, nous conformant au précepte divin, nous nous sommes courbé sous votre pouvoir, et nous avons recommandé à Dieu le soin de vous éclairer à ce sujet, et de vous montrer vos torts. Nos prières ont été exaucées et ont porté leur fruit, parce que vous aimez le bien. Si cette tourbe d'aujourd'hui, redoutant votre puissance, m'a pris à votre place pour le but de ses injures, et a soulevé avec elle les turbulents et les ambitieux, toi maintenant tu te joins à leur coalition contre celui qui a assumé sur sa tête les outrages qui t'étaient destinés; tu me blâmes parce que je suis dans la vérité, toi qui as vu par tes propres yeux que je possède cette vérité et qui en as profité, et qui cependant écoutes leurs calomnies. Que Dieu te préserve de juger

[1] Le patriarche Grégoire Dgh'a était en butte aussi à l'animosité du clergé de la Grande Arménie, à cause de son penchant pour Rome et de sa correspondance avec les papes Luce III et Clément III, et surtout à cause de ses efforts pour réunir l'Église grecque et l'Église arménienne. Il avait convoqué, en 1179, dans ce but, le concile de Hr'om-gla, à l'instigation de l'empereur Manuel Comnène et du patriarche de Constantinople. Les évêques et les docteurs de la Grande Arménie, qu'il avait invités à venir y assister, refusèrent, et lui répondirent par des récriminations et des injures. Plus tard, leur opposition se tourna principalement contre les tendances latines de saint Nersès de Lampron.

զՊիղատոսի դատողութեանն ճանապարհ· զի այսպէս էր նորայն՝ ոչ ունելով զդառնութիւն նախանձու, Հրէիցն մտօք աղաղակաւ խարխալեցաւ, և մեծ չարեացն հաղորդեցաւ ։ Այլ զքո ատեանդ արասցէ Քրիստոս արդարադատիչ՝ որպէս զբարեպաշտիցն Կոստանդդիանոսի և Թէոդոսեանցն, զի ճշմարտութեան լիցիս ջատագով, և մի շատախօսութեանն ։

Եւ որ աղաղակեմ, թէ՝ Նախանձեցայ զնախանձ Տեառն ամենակալի, և զմարգարէսն Բահաղու յանդիմանեցի· սակս որոյ և խնդրեն զանձն իմ· և անէծք իւրեանց, զոր կարծես առ քեզ հկատեալ՝ ի գլուխս իւրեանց դարձցի, և ի տունս անբարշտելոցն· և չէ այն քեզ և ոչ մեզ, որ քեզ հաղորդիմք՝ անէծք· այլ զնոսին միշտ ածէ յայն պատիժն, զոր ասաց Քրիստոս, թէ՝ որ զՀոգին սուրբ հայհոյէ՝ մի թողցի նմա, մի յայսմ աշխարհի և մի ի հանդերձելումն ։ Զի որպէս Հրեայքն զՔրիստոս պայծառացեալ բժշկութեամբն Բէէղզեբուղաւ զդպարտեցին դիւաց հալածիչ, և զայս լուան դատավճիռ, զնոյն և Թանձրապորտ Տուտէորդին, և ժողովք չարեաց Հաղբատացիքն ոչ քննեցին և ոչ հաւատացին մեր արդար իրաւամբք զՄանուկն նահանջելոյ և չարակնելոյ իշխանութեանն, որում առընթեր էաք և տեղեակ ։ Այլ ի բացեայ գոլով և ի նորին ծանօթութենէն, և ի մեր ճշմարտութենէն, կամեցաւ ունել Մանուկ հայրապետ և կալ ի ներքոյ վային, որ ասէ գիրն· վայ քեզ քաղաք որոյ թագաւոր քո մանուկ է· և իշխանք քո ընդ առաւօտս ուտեն, և զհետ լինին ցքոյն ։ Յայս խոկացին՝ նովաւ անվրդով կալ ի գինըմպութիւնն, և

---

comme le fit Pilate! car celui-ci, quoique à l'abri de l'amertume des outrages, se laissa ébranler par les vaines clameurs des Juifs. Que ton tribunal, comme celui des pieux souverains Constantin, Théodose le Grand et Théodose le Jeune, prenne comme le plus juste des arbitres le Christ, afin que tu sois constitué le défenseur de la vérité et non du bavardage.

Sur quoi je m'écrie : « J'ai brûlé du zèle du Seigneur Tout-Puissant, et j'ai « réprimandé les prêtres de Baal; c'est pourquoi ils cherchent mon âme[1]. » Leurs malédictions, dont tu te crois atteint, retomberont sur eux, et retourneront dans les maisons de ces prévaricateurs. Elles ne frapperont ni vous, ni nous qui sommes en communion avec vous; mais elles leur vaudront à jamais le châtiment qu'annonce le Christ par ces paroles : « Quiconque blasphème contre l'Esprit-Saint ne « sera pardonné ni dans ce monde ni dans l'autre[2]. » Car de même que les Juifs calomniateurs accusèrent le Christ, qui se glorifiait de ses guérisons, de chasser les démons à l'aide de Béelzébuth, et entendirent prononcer cette sentence, de même ce ventru de Doudéorti et ces conciliabules de méchants de Hagh'pad se sont refusés à tout examen, et n'ont pas cru que c'est à bon droit que nous avons repoussé Manoug; ils se sont imaginés que nous portions envie à son élévation dont nous étions rapproché et parfaitement instruit. Ce patriarche, ignorant tout à fait ce qui se passait et la droiture de nos sentiments, a préféré rester obstinément sous le coup de cette menace de l'Écriture : « Malheur à toi, cité dont le « roi est un enfant (manoug); tes chefs mangent dès l'aurore, et s'adonnent aux « boissons enivrantes[3]. » Leur préoccupation a été de se livrer sans scrupule à l'ivrognerie, à des orgies et autres mauvaises actions, au milieu desquelles ils font

[1] III Rois, XIX, x et xiv.

[2] S. Marc, III, xxix.

[3] Dans cette citation, qui est tirée de l'Ecclésiaste (X, xvi), ce dernier membre de phrase : « qui s'a- « donnent aux boissons enivrantes, » և զհետ լինին ցքոյն, est sans doute une addition de notre auteur, car il ne se trouve ni dans la Bible arménienne, ni dans le texte des Septante sur lequel elle a été traduite, ni dans la Vulgate. On remarquera que l'auteur joue sur la signification du mot մանուկ, *manoug* « enfant, » surnom du patriarche Grégoire V.

յորովայնապարարութիւնն և յայլ չարիսն, յորոց միջի Ճախրեն, և ընդ կարճառելն մաղկատեալ, անտես արարին զաստուածահաստատ իշխանին գիր, և զսուրբ ժողովոյ եպիսկոպոսացն, որ ընդ քեզ, և զարժանաւոր եպիսկոպոսին հրեշտակութիւնն. և զՄանկանն անհանճարի գիր այնպիսի մանկանց պատգամաւորութեամբ պատուեցին, որք ի նորա քահանայապետութիւն իբրև զորդիսն Հեղեայ ձեռներէց էին ի վերայ Քրիստոսի հօտին, և աղէին. տուր միս խորովելոյ, ապա թէ ոչ՝ առնում բռնի. Տիգրանաւ՝ որ փախն էր ի ծառայութենէն զերծանելոյ՝ Հայոց համնակից գտան. և զքեզ աստուածասէր և աստուածահաստատ, և զմեզ ընդ քեզ յանդուգն բերանովք զրպարտեցին հրեշտակութեամբ միոյ միանձնի, որոյ և անունն Աստուծոյ էր անգիտելի. Դու իրաւացի առնես որ զնոցա բանն ի գիր ածես, կամ զմեզ զգուես. արք՝ որոց բերանքն անիծիւք և դառնութեամբ լի են, որ զթոյնս իժից ունին ի ներքոյ շրթանց, որոց երագ են ոտք հեղուլ զարիւն, որք զճանապարհ խաղաղութեան ոչ ծանեան և ոչ գոյ երկիւղ առաջի աչաց նոցա. Զի առանց ստութեան է այս վկայութիւն նոցին, իւրեանց գրերն ցուցանեն, որք զքեզ յայն դատեցին՝ որ չէիր. և զմեզ նոյնպէս. ոչ թէ ոչ գիտելով, այլ կամաւ զհուր զրպարտութեանն զգայթելով.

Արդ թէ քո աստուածպաշտութիւնդ արժանացոյց զնոսա պատասխանւոյ, մեր իմաստութիւնս ոչ կամի. զի խրատիմք ոչ տալ անզգամին պատասխանի. և զի յետին են նոքա որ յայս յանդգնին՝ բոլոր հարց, որք մերում ճշմարտութեանս ջատագովք են, նոյն ինքն

éclater leur joie; et, dans le dépit de se voir interrompus, ils n'ont fait aucun cas de ta lettre, d'un écrit émané d'un prince affermi par Dieu, et de celle du saint concile d'évêques réunis à toi, ainsi que du mandat du digne évêque envoyé vers eux[1]. Au contraire, ils ont fait honneur à la lettre de cet insensé Manoug, en y répondant par une députation d'enfants pareils à lui, eux qui, sous son pontificat, ont, comme les fils d'Héli, osé porter la main sur le troupeau du Christ, et qui s'écriaient, « Donne-nous de la viande à cuire ou nous la prendrons « de force[2]; » en y répondant par l'envoi de Tigrane, cet échappé de la servitude, qui, à ce titre, a été jugé unanime de sentiments avec les Arméniens.

Toi qui es aimé de Dieu et établi par lui, ainsi que nous, nous avons été calomniés par ces hommes à la langue effrénée, qui avaient pour organe un seul moine leur député, dont le nom restera toujours inconnu de Dieu. Ce sera justice de ta part que de faire consigner leurs paroles par écrit; sinon ce serait agir contre nous. Ce sont des gens dont la bouche est remplie de malédictions et d'amertume, qui ont le poison des vipères sur les lèvres, des pieds rapides pour répandre le sang, qui ignorent le sentier de la paix, et n'ont point la crainte de Dieu devant les yeux. Que le témoignage que nous rendons sur leur compte soit exact, c'est ce que montrent leurs écrits, dans lesquels ils t'ont représenté pour ce que tu n'es pas, et nous aussi; et cela sans connaissance de cause, et en vomissant le feu de la calomnie.

Si Ta Piété les a trouvés dignes d'une réponse, dans notre sagesse nous nous refuserons absolument d'en faire autant; car on nous a appris qu'il ne faut pas répondre à celui qui est incorrigible. Malgré leur présomption, ils sont bien au-dessous de tous les Pères qui ont pris parti pour notre orthodoxie, soit dans notre propre pays, soit à la Montagne-Sainte avec les vénérables pasteurs qui l'habitent,

[1] Saint Nersès ne nomme point cet évêque, qui était peut-être le chapelain du palais du roi, դրան երէց. — [2] I Rois, II, xv et xvi.

մեր աշխարհս և սուրբ լեառնս, և որ ի նմա հոգիքս սուրբք, և բոլոր գաւառն Վասպուրականի, և որ անդ հռչակաւոր ուխտն Վարագ, և երևելի արքն՝ Ստեփաննոս Տիրացուն ուսուցիչն մեր, և Գէորգ ճգնաւորն, և Ստեփաննոս՝ մեր ուսումնակից, և Քրիստոսատուր և Տիմոթէոս ճգնաւորք, որք ականատեսք լեալ են մեզ, և որ առ մեզ ճշմարտութեանս հաւանեալ, և երանեն թէ կարող էին ձայնակցել։ Բոլոր գաւառն Տարօնոյ, և որ ի նմա իմաստուն եպիսկոպոսն Եսայի, և վարժապետ Թէոդորոս, որ զմերս բարեհռչակեն բարեկարգութիւն և երանեն զհաղորդեալսն։ Գաւառն Եկեղեաց, և լեառն սրբոյն Գրիգորի, և որ ի նմա հարքն և եպիսկոպոսքն՝ որք գրովք իւրեանց բարեհամբաւեն զմեր ճշմարտութիւնս, և աւաղեն վասն աղքատութեան և անօրինաց բռնութեանն ի սմանէ վերջանալոյ։ Իշխանքն Խաչենոյ, և որ անդ վանորայք, որք զաշակերտն մեր զՅովսէփ, և զկարգաց մեր վարժապետ՝ որպէս զհրեշտակ պատուեն, և կաթողիկոսութեանն Աղուանից ընծայեն։ Եկեղեցիքն լատինացւոց, որ աստ յարևելս, և որք յարևմուտս, որոց հաճոյացաւ մեր իմաստութիւնս՝ ի գնալն ինքնակալին Հռոմայ ժողովով եպիսկոպոսացն, որք տեսեալ զմեզ հմուտ կարգաց իւրեանց, և մերոյս լուսաւորիչ ի վերայ բարեգործութեանն, փառաւորեցին զՀայր՝ որ յերկինս։ Եկեղեցիքն Անտիոքու՝ Լատինացւոցն և Հելլենացւոցն, որք Պօղոսի անուամբն զմեր նուաստութիւնս բարեհամբաւեն, և նորին աթոռոյն արժանապատիւ լինել յաջորդ վկայեն, որոց դրունքն մեզ բաց են, և ժառանգաւորքն

---

soit dans la province de Vasbouragan et son célèbre couvent de Varak[1]; bien au-dessous de ces hommes éminents, tels qu'Étienne Diratsou, notre maître, Georges l'ascète, Étienne, notre condisciple, les moines Christosadour (Christdonné) et Timothée, lesquels sont pour nous comme des témoins oculaires qui adhèrent à nos sentiments orthodoxes, et seraient heureux de pouvoir manifester leur conformité avec nous. Je citerai le district de Darôn, avec son sage évêque Isaïe et le professeur Théodore, qui proclament la vérité de nos doctrines et vénèrent ceux qui les suivent; le district d'Éguégh'iats et la montagne de saint Grégoire[2], avec les pères et les évêques qui y résident, et qui se plaisent à faire notre éloge dans leurs écrits, et qui tous déplorent d'être séparés de nous, par suite de leur pauvreté et de la tyrannie des infidèles, avec les princes de Khatchên[3] et les couvents de ce district, où notre disciple Joseph, qui enseigne nos institutions, est honoré comme un ange, et qui le désignent comme le futur catholicos des Agh'ouans. Je mentionnerai encore les églises des Latins en Orient, ainsi qu'en Occident, qui ont approuvé nos bons sentiments lors de l'arrivée de l'empereur des Romains [Frédéric Barberousse]. Dans une réunion d'évêques, en me voyant instruit de leur discipline, et répandant la lumière sur mon pays par la pratique du bien, ils ont glorifié le Père céleste. Je rappellerai aussi les églises des Latins et des Grecs à Antioche, lesquelles saluent notre humble personne du nom de Paul, attestant que nous sommes le digne héritier du siége de cet apôtre, églises dont les portes

[1] Cf. sur le monastère de Varak, ci-dessus, p. 38, note 1.

[2] Le mont Sebouh. (Cf. ci-dessus, p. 560, note 1.)

[3] Famille de princes qui possédait le district de Khatchên, faisant partie de la province d'Artsakh, dans l'orient de la Grande Arménie. Les historiens ne nous ont transmis sur le compte de ces princes que quelques notions rares et incomplètes; mais on sait, par les inscriptions recueillies dans ces derniers temps, que leur postérité subsistait encore à la fin du XIII[e] siècle. Ils furent soumis par les Mongols, lorsque ces peuples pénétrèrent dans l'Agh'ouanie et l'Arménie vers 1220, et ils se mirent à leur service. (Cf. M. Brosset, *Hist. de la Géorgie*, additions et éclaircissements, p. 339 et suiv. et mon Mémoire intitulé : *les Mongols d'après les historiens arméniens*, *Journ. asiat.* cahier de févr.-mars 1858, p. 245.)

աշակերտեալք ։ Պատրիարգն Ասորւոց՝ որոյ գիրն առ մեզ, և բարի վկայութիւնն մեր աղքատութեանս մեծահռչակ ։ Մեծայեալն Թագաւորութեանն Կիպրոսի գունդստապլն, որ ի գալն ի կարիս ձեր օգնականութեանն առ մեզ, հաճութեամբ և գովութեամբ ընկալաւ զմեր բարեկարգութիւնն ։ Կոմսն Հէռի, որ Պաղեստինացւոցն ընծայեալ է թագաւորութեանն, զոր յայս ամ բերեալ ձեր ի Տարսոն, սկիզբն զայս արար առ մեզ խօսելոյ, թէ ոչ զոք գտայ այսօր բարի անուամբ հռչակեալ առ բազումս, որպէս զքո երկիւղածութիւնդ ։

Առաջին կաթուղիկոսն տէրն իմ Գրիգոր որ առ Քրիստոս փոխեցաւ, ի ժամ վախճանին զայս ասաց, թէ հալածահարեալ եմ զքո ճշմարտասիրութիւնդ մարդահաճոյ կամօք, ներողութեամբ թող ինձ ։ Այժմու Հայրապետս որ ի բնաւորութենէ և յիմաստութենէ ընթացակից լեալ մեր ճշմարտութեանն, և նախատինս վասն այսր ընդունի յօժարութեամբ ։ Ի վերայ այսր արտաքին վկայիցս ունիմք և զմտաց իմոց խիղճ, յոր հաստատեալ եմ թէ բարիոք միտս ունիմ, և յամենայնի կամիմ բարւոք գնացս ցուցանել ։

Արդ զայս ամենայն որ ի Հայոց և յայլոց ազգաց՝ և ի մտաց խղճէ բարի վկայութիւն անտես առնեմ, և ի Ձորոյգետ զերկուց արանց, որք իբրև զշունս լիրբս հաչեն՝ զկամս

---

nous sont ouvertes, et dont les ministres ont suivi nos leçons; et le patriarche des Syriens, dont j'ai entre les mains les lettres et le témoignage éclatant qu'il rend à notre chétive personne; et le connétable qui a été élevé au trône de Chypre[1], et qui, en venant chez nous pour vous secourir dans le besoin, a accueilli nos bons principes avec empressement et éloge; et le comte Henri [de Champagne] qui a été fait roi de la Palestine, et que vous avez amené cette année à Tarse[2], lequel commença la conversation avec nous en nous assurant qu'il n'avait trouvé personne jouissant à cette époque-ci d'une renommée meilleure et plus étendue que nous, qui craignons Dieu.

Le précédent catholicos, notre seigneur Grégoire [Manoug], qui est retourné vers le Christ, me dit au moment de sa mort : « Je t'ai persécuté dans ton ortho-« doxie, pour complaire aux hommes, pardonne-moi. » Le catholicos actuel [Grégoire VI, dit *Abirad*], qui, par sa propre inclination, et inspiré par sa sagesse, suit la même voie que moi, accepte avec plaisir les outrages que son approbation lui attire. Outre ces témoignages extérieurs, j'ai celui de ma conscience, qui me rend certain de la pureté de mes intentions, et qui justifie mes efforts à prouver que je suis dans le vrai sentier.

Négligerai-je tous ces témoignages qui me viennent et des Arméniens, et des étrangers, et de ma conscience, pour être agréable à ces deux hommes de Tzo-ro'ked, qui aboient comme des chiens effrontés, et qui, pour faire escalader les

[1] Amaury ou Émery, connétable du royaume de Jérusalem, et frère de Guy de Lusignan. Il succéda à son frère, dans l'île de Chypre, en avril 1194, avec le titre de roi que, le premier des Lusignan, il inaugura; il mourut le 1er avril 1205. Il avait épousé en secondes noces Isabeau, fille d'Amaury, roi de Jérusalem, et par cette alliance devint roi titulaire de la Cité sainte.

